Ազգ
Azg
23 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2010 ՇԱԲԱԹ 194 (4574)
ISSN: 1829-1651

# Մինչ Աստանա՝ Սարգսյան-Ալիեւ-Մեդվեդեւ հանդիպում Աստրախանում

Հոկտեմբերի 27-ին Ռուսաստանի Դաշնության Աստրախան քաղաքում ՌԴ նախագահ Դմիտրի Մեդվեդեւի նախաձեռնությամբ տեղի կունենա Հայաստանի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության եւ Ադրբեջանի Հանրապետության նախագահների եռակողմ հանդիպում: Ինչպես տեղեկացնում է Հայաստանի նախագահի մամլո գրասենյակը, հանդիպման ընթացքում կողմերը կշարունակեն բանակցությունները Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման շուրջը:

Թերեւս եզակի անգամներից է, երբ Հայաստանի նախագահի նստավայրից մինչեւ հանդիպման պահը լռություն պահպանելու փոխարեն տեղեկացնում են կայանալիքի մասին: Ամեն դեպքում, նշենք, այս եռակողմ հանդիպումը 2010-ին կլինի երրորդը՝ Սոչիի հունվարյան եւ Պետերբուրգի հունիսյան հանդիպումներից հետո: Իսկ ընդհանուր առմամբ, Սերժ Սարգսյանի նախագահ ընտրվելուց հետո այս հանդիպումը եռակողմ ձեւաչափով կլինի արդեն 7-րդը:

Հետաքրքրական է, թե ինչ կհետեւի այս հանդիպմանը, քանի որ այս ձեւաչափով վերջին հանդիպումից Ալիեւը հեռացել էր ակնհայտորեն դժգոհ, ընդ որում՝ հեռանալուն անմիջապես հետեւեցին Չայլուի դիվերսիոն դեպքերը:

Ա. Հ.

# Կովկասի մոլագարը

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ



Պատմությանը հայտնի բոլոր բռնապետները տառապել են թերարժեքության բարդույթով: Ներոնը գզչակ էր եւ հրդեհեց Հռոմը, Թամերլանը կաղ էր եւ աշխարհից վրեժխնդիր եղավ... Այսպես կարելի է հասնել նորագույն ժամանակներին՝ Լենին, Հիտլեր, Ստալին, Մաո: Իլհամ Ալիեւն, իհարկե, թվարկածների մակարդակին դեռեւս «չի ձգում», բայց ակնհայտորեն ձգտում է հասնել:

Պարզվում է, որ նրան էլ թերարժեքությունը խորթ չէ: Մոսկվայի միջազգային հարաբերությունների ինստիտուտում սովորելու տարիներին, ինչպես վստահելի աղբյուրներն են վկայում, նա լուրջ խնդիրներ է ունեցել, որոնք կարգավորվել են միայն հոր միջամտությամբ:

Մեկ անգամ, սակայն, նույնիսկ Կրեմլից հնչած զանգն է անզոր եղել. հայտնի քաղաքագետ եւ մեկնաբան Վալենտին Զորինը, որ ՄԳԻՄՕ-ի պրոֆեսոր էր, «թագաժառանգին» անբավարար է նշանակել: Եվ Իլհամն ստիպված «ուսումնառությունը շարունակել է» Կիեւում:

Այս ձախողումն, ըստ երեւույթին, նրա հոգեկանը խեղել է: Մարդն, ինչպես ասում են, «կոտրվել է» եւ այլեւս չի վերականգնվում: Անվերջ մղվում է ինքնահաստատման: Ուզում է ձերբազատվել «կաղ բադիկի» բարդույթից: Եվ, իհարկե, ոչնչի չի հասնում: Որովհետեւ ինչ էլ անի, թե՛ հպատակները, թե՛ մերձավորները, թե՛, մանավանդ, միջազգային հանրությունը նրան ընկալում են որպես Հեյդար Ալիեւի որդու: Հոր ստվերը նրանից միշտ մի քանի քայլ առաջ է:

Այսպես անվերջ շարունակել անհնար է: Եվ Իլհամ Ալիեւը վճռական որոշում կարծես ընդունել է՝ հաղթահարել «խեղկատակ թագաժառանգի» բարդույթը: Եվ, դժբախտաբար, դրա համար ընտրել է անհուսալի տարբերակ՝«լուծել Լեռնային Ղարաբաղի խնդիրը, պատմության մեջ մտնել որպես Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը վերականգնող առաջնորդ»:

Այս իմաստով նրա ընդդիմախոսը ոչ Հայաստանն է, ոչ Լեռնային Ղարաբաղը, ոչ էլ միջազգային հանրությունը: Իլհամ Ալիեւը մրցապայքարի մեջ է հոր՝ «համազգային առաջնորդ» Հեյդար Ալիեւի հետ: Նա կռվում է հոր ուրվականի դեմ:

Առանձնության պահերին Իլհամ Ալիեւն ամենայն հավանականությամբ զբաղվում է ոգեկոչությամբ: Իսկ երբ հոր ուրվականը որեւէ տրամաբանական լուծում չի առաջարկում, նա կորցնում է բանականության վերջին նշույլները եւ շպրտում կառավարության արտահերթ նիստ գումարել, որպեսզի հերթական անգամ «վստահեցնի, որ ադրբեջանական հողում երկրորդ հայկական պետություն չի ստեղծվելու»:

Տես էջ 4

# Պետական դումայի անձեռնմխելիությունից զրկեց Եղիազարյանին

ՌԴ Պետդուման այս մասին ընդունեց որոշում երեկ: Ռուսաստանի Լիբերալ-դեմոկրատական կուսակցության ներկայացուցիչ Աշոտ Եղիազարյանը, հիշեցնենք, մեղադրվում է 200 մլն դոլարի հասնող պարտքեր ունենալու, խարդախությունների մեջ: Դումայի պատգամավորներից 382-ը կողմ արտահայտվեցին Եղիազարյանին անձեռնամխելիությունից զրկելուն, դեմ էին 40 պատգամավորներ: Եղիազարյանը նիստին ներկա չէր, հայտնի չէ նաեւ պատգամավորի գտնվելու վայրը. նա նախօրոք տարածել էր գործընկերներին ուղղված դիմում-հայտարարություն, որտեղ պարզաբանել էր իր բացակայության պատճառը. «Ես այժմ Ռուսաստանում չեմ գտնվում, քանի որ իմ անձի եւ իմ ընտանիքի անդամների կյանքին սպառնում է վտանգ», ասված էր պատգամավորի հայտարարությունում:

Այժմ, փաստորեն, Աշոտ Եղիազարյանի նկատմամբ դաշնային դատախազությունը կներկայացնի մեղադրանք ՌԴ քրեական օրենսգրքի 4-րդ մասի 159-րդ հոդվածի համաձայն. այն է՝ մեկ կամ մի քանի հոգու կողմից իրականացված առավել մեծ չափերի հասնող խարդախություն: Վերոհիշյալ օրենսգիրքը նման պարագայում նախատեսում է մինչեւ տասը տարվա ազատազրկում: Եղիազարյանը հերքում է իրեն հասցեագրված բոլոր մեղադրանքները:

Հ. Ա.



# Քանի դեռ Թուրքիան չի ընդունել Ցեղասպանության փաստը, ԱՄՆ-ը կօգտագործի դա որպես ճնշման հզոր լծակ

**Միացյալ Նահանգներն օգտագործում է «Ցեղասպանության խաղաքարտը»՝ ՆԱՏՕ-ի հրթիռային համակարգի առնչությամբ Թուրքիայի վրա ճնշումներ գործադրելու համար: Ըստ Hurriyet Daily News-ի տեղեկությունների, ԱՄՆ-ը երկընտրանքի առաջ է կանգնեցրել Թուրքիային: Կամ Թուրքիան համաձայնում է հակահրթիռային համակարգերի տեղակայմանն իր տարածքում, կամ Միացյալ Նահանգները ճանաչում է Հայոց ցեղասպանությունը: Բացի այդ, ըստ պարբերականի տեղեկությունների, ԱՄՆ-ը բավականին լուրջ է վերաբերվում իր պահանջներին՝ դրանց ավելացնելով նաեւ Թուրքիա-Իսրայել հարաբերությունների նորմալացման հարցը, որոնց, ըստ պարբերականի, Թուրքիան պետք է հնարավորինս շուտ արձագանքի:**

**Բանն այն է, որ Լիսաբոնում երեկ մեկնարկած ՆԱՏՕ-ի գագաթաժողովում Միացյալ Նահանգները մտադիր է քննարկել Թուրքիայում հակահրթիռային համակարգերի տեղակայման հարցը այն դեպքում, երբ Թուրքիան արդեն իսկ հայտարարել է, թե դեմ է այդ մտադրությանը:**

**Հետաքրքրական է, որ Hurriyet Daily News-ի մասնցմամբ, «Վաշինգտոնը հակահրթիռային համակարգերի տեղակայման հարցում Թուրքիայի համագործակցությունը ստանալու համար փորձում է օգտագործել երկու երկրների հարաբերություններում ամենաասուր հարցը»: Տվյալ դեպքում պարբերականը նկատի ունի Հայոց ցեղասպանության ճանաչման հանգամանքը:**

**Ըստ հրապարակման, Թուրքիայի իշխանությունների հետ քննարկումներում ԱՄՆ պաշտոնյաները նշել են, թե Անկարայի քաղաքականությունը Իրանի հարցում, լարվածությունը Իսրայելի հետ եւ հակահրթիռային համակարգերի տեղակայմանը դեմ արտահայտվելը կարող են կողմնորոշել թուրք-ամերիկյան հարաբերությունները եւ դառնալ թեստ՝ պարզելու, թե Թուրքիան ինչպես է ցանկանում զարգացնել իր հարաբերությունները:**

**«Քանի դեռ այդ երեք ոլորտներում որեւէ առաջընթաց չկա, Վաշինգտոնը դիվանագիտական խողովակներով հասկացրել է, որ Թուրքիան չպետք է անակնկալի գա Հայոց ցեղասպանության ճանաչման պահանջը մինչեւ այս տարեվերջ ընդունված տեսնելով», հավաստիացնում է պարբերականը:**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# «Հայաստանը Ձեր գործընկեր» ցուցահանդեսը բացվեց Երեւանում

**Երեկ Երեւանի Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում բացվեց «Հայաստանը Ձեր գործընկեր» առաջին միջազգային բազմաբնույթ ցուցահանդեսը: Հանդես գալով բացման խոսքով՝ Հայաստանի առեւտրաարդյունաբերական պալատի նախագահ Մարտին Սարգսյանը ընդգծեց, որ ցուցահանդեսին մասնակցում են ավելի քան 200 ընկերություններ, որոնք ներկայացնում են 500-ից ավելի ապրանքներ եւ ծառայություններ: Նա հաստկանշական համարեց, որ մասնակիցների թվում են նաեւ օտարերկրյա ընկերություններ, որոնք հնարավորություն կունենան գործընկերներ գտնելու Հայաստանում:**

**Ցուցահանդեսի մասնակիցներին ողջունեց նաեւ ԱԺ պատգամավոր Հերմինե Նաղդալյանը, հետո տեղի ունեցավ բացման արարողությունը:**

**Ցուցահանդեսի կազմակերպիչն է «Պրոմէքսպո» ընկերությունը: Մասնակցում են 200-ից ավելի ընկերություններ Հայաստանից, Ռուսաստանից, Մեծ Բրիտանիայից, Գերմանիայից, Իրանից, Բուլղարիայից, Արաբական Միացյալ Էմիրություններից եւ այլ երկրներից: Ցուցահանդեսը բաղկացած է 13 բաժիններից եւ տեղակայված է 3500 քմ տարածքի վրա: Կգործի նաեւ այսօր եւ վաղը:**

Ա. Մ.

# ԵԿԳ-ն ավարտել է խաղողի մթերումները

**Ինչպես տեղեկացանք Երեւանի կոնյակի գործարանից, գործարանն ավարտել է խաղողի մթերման գործընթացը՝ ամբողջովին կատարելով իր պայմանագրային պարտավորությունները: Մասնավորապես, տեղեկացվում է, որ մթերվել է 28 հզ. 525 տոննա խաղող՝ մթերման երեք կետերում՝ Արմավիրի, Այգավանի եւ Բերդի մասնաճյուղերում: Ըստ հաղորդագրության, մթերման շրջանում մատակարարված խաղողի դիմաց գումարներն արդեն փոխանցվել են խաղողագործների բանկային հաշիվներին:**

# «Ամերիաբանկն» ամենամեծ վարկային պորտֆելն ունի Հայաստանում

**Ինչպես տեղեկացանք «Ամերիաբանկից», բանկի վարկային ծավալը այս տարվա 9 ամիսներին կազմել է 88 մլրդ դրամ: Այդ ցուցանիշով բանկն առաջին տեղն է զբաղեցնում Հայաստանի բանկային համակարգում: Տարվա սկզբի համեմատ աճը կազմել է 37 տոկոս, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ՝ 98 տոկոս:**

Ա. Մ.

# Կլոր, թե քառանկյունի դահլիճ՝ կարեւորը բովանդակությունն է

## *Բացվեց խորհրդարանի նոր դահլիճը*

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ




Ճիշտն ասած՝ շատ ուրախ ենք մեր պատգամավորների համար, նրանք երեկ ստացան շքեղ, համակարգիչներով հագեցած, բոլոր հարմարություններով օժտված օվալաձեւ դահլիճ: Այստեղ աշխատելը պետք է որ հաճելի ու հարմար լինի, անխափան ընթացք ապահովի մեր ազգընտիրների օրենսդրական գործունեության հրապարակային մասի համար. շնորհավորում ենք: Պատգամավորների այն հատվածը, որ մինչեւ հիմա համակարգչից օգտվել չգիտեր (կա՞ն այդպիսիք), ստիպված է սովորել, թե չէ համակարգիչները նրանց համար բուտաֆորիայի կվերածվեն: Հարմարության առումով նույնը չի կարելի ասել լրագրողների համար, ովքեր այսուհետեւ դահլիճում ընդհանրապես չեն կարող հայտնվել, նրանք պետք է փակ օթյակներից, ավելի ստույգ՝ ապակու հետեւից նայեն մեր օրենսդիրների հայրենանվեր աշխատանքին, եւ անմիջական կոնտակտի մեջ մտնելը, հարցազրույց վերցնելը, եթե տվյալ պատգամավորը հատկապես դրանից խուսափում է, կդժվարանան: Չնայած, սկզբունքային առումով, խորհրդարանը պիտի որ պետական կառույցներից ամենադեմոկրատականը լինի, քանի որ անմիջականորեն ժողովրդի ընտրությամբ է ձեւավորվում, եւ հատկապես լրագրողների հետ շփումները պետք է այստեղ մյուս կառույցներից շատ ավելի հեշտացված լինեն: Բայց փաստորեն հակառակն է ստացվում, մանավանդ՝ ապակիների մասով, դրանց հետեւից նիստին հետեւելը կարող է անգամ սիրտ ճաքեցնել: Մենք էլ կարող ենք առավել առաջ գալ խորհրդարանի առաջարկած «պանիրը բանկայի մեջ» նոր աշխատաձեւից ու առաջարկել, որ պետությունը միջոց գտնի եւ օնլայն հեռարձակի ԱԺ նիստերը՝ փակ ռեզերվուարներից ազատելով լրագրողներին. պատգամավորները վերջնականապես կազատվեն լրագրողներից, վերջիններս էլ համակարգիչների մոտ նստած աշխատավայրից կհետեւեն ԱԺ նիստերին, ու այդպե՜ս օնլայն էլ կապրենք:

Տես էջ 3

# Մամեդյարովին պետք է հիշեցնել, որ երազելը վնաս չէ, քանի դեռ չի դարձել ինքնախաբեություն

Լեռնային Ղարաբաղի անկախության ճանաչումը Հայաստանի կողմից «մեծ սխալ կլինի միջազգային իրավունքի տեսանկյունից»: Միջազգային հարաբերությունների մասնագետների սիմպոզիումում ելույթ ունենալով՝ նման գնահատական է հնչեցրել Ադրբեջանի ԱԳ նախարար **Էլմար Մամեդյարովը**:

Ադրբեջանական լրատվամիջոցների տեղեկացմամբ, իր ելույթում Մամեդյարովը հայտարարել է, թե Հայաստանի կողմից Լեռնային Ղարաբաղի անկախության ճանաչումը «միանշանակորեն կգնահատվի որպես ագրեսիա»: Դժվար է հասկանալ Մամեդյարովի ամտրամաբանական «տրամաբանությունը», հատկապես, որ, ըստ նրա, «Լեռնային Ղարաբաղը Խորհրդային Ադրբեջանի մաս է»: «ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը պետք է իր դիրքորոշումն արտահայտի Հայաստանի կողմից ԼՂ ճանաչման առնչությամբ», հայտարարել է Ադրբեջանի արտգործնախարարը:

Մամեդյարովն իր ելույթում անդրադարձել է նաեւ այս ամիս տեղի ունեցած ԵԱՀԿ դաշտային գնահատման առաքելությանը, հույս հայտնելով, թե վերջինս «օբյեկտիվ կարտացոլի տեսածը»: Մամեդյարովի ցանկությամբ, զեկույցում պետք է տեղ գտնեն այն փոփոխությունները, որ տեղի են ունեցել փաստահավաք վերջին առաքելությունից հետո, որն իրականացվել է 2005-ին:

Չնայած երեկ արդեն հայտնի էր, որ Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահները Ռուսաստանի նախագահի նախաձեռնությամբ հոկտեմբերի 27-ին եռակողմ հանդիպում կունենան Աստրախանում, Մամեդյարովն, իր հերթին, այս տեղեկությանն ավելացրել է, թե ներկա դրությամբ քննարկման փուլում է ԵԱՀԿ Աստանայում կայանալիք գագաթաժողովի շրջանակներում Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների հանդիպման հարցը: Ընդ որում, ըստ Ադրբեջանի ԱԳ նախարարի, ներկայումս քննարկվում է Աստանայում կազմակերպելիք հանդիպման ձեւաչափը, որն էլ թերեւս կդառնա քննարկման առարկա, երբ նոյեմբերի սկզբին տարածաշրջան կժամանեն Մինսկի խմբի համանախագահները:

Այդուհանդերձ, Մամեդյարովը պատասխանել է նաեւ այն լուրերին, թե Աստանայում կարող է ինչ-որ փաստաթուղթ ստորագրվել: «Խոսք անգամ չկա Աստանայի ԵԱՀԿ գագաթաժողովում ինչ-որ փաստաթղթի, «ճանապարհային քարտեզի» ստորագրման մասին: Բոլորն էլ դա ցանկանում են, որ մենք ինչ-որ «ճանապարհային քարտեզ» որոշենք, ավարտենք դրա պատրաստումն ու ինչ-որ առաջընթաց գրանցենք: Բայց մենք դեռ չենք սկսել աշխատել որեւէ փաստաթղթի վրա», հայտարարել է Մամեդյարովը:

Ադրբեջանական կողմի բնավ էլ ոչ նորություն հանդիսացող գնահատականները ԼՂՀ-ի հարակից տարածքների, դրանց ծագման, բանակցային գործընթացում Հայաստանի դիրքորոշման մասին հստակորեն ներքին լսարանին ուղղված խոսքեր են, որոնցից որեւէ կերպ զերծ չի մնում ադրբեջանական վերնախավի ոչ մի ելույթ: Ամեն դեպքում, Մամեդյարովը հայտարարել է, թե կարգավորման ներկա ընթացքը տանում է դեպի «Ադրբեջանի տարածքային ամբողջականության վերականգնում», եւ դա այն դեպքում, երբ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախ կյանքն այլեւս երբեք չի կարող դառնալ որեւէ այլ պետության կյանքի մաս:

Մամեդյարովը սիմպոզիումի մասնակիցներին սեփական մեկնաբանությամբ է ներկայացրել նաեւ Մինսկի խմբի գործընթացն ու բանակցությունների ընթացքը, կրկնելով արդեն անեկդոտային հնչեղություն ստացած իր միտքը, թե Հայաստանը դեռ չի պատասխանել մադրիդյան առաջարկներին այն դեպքում, երբ մոտ օրերին ականատես կլինենք եւս մեկ բարձրամակարդակ հանդիպման: Դա բնավ էլ չի վկայում, թե Հայաստանն ինչ-որ տեղ մնացել է ու ինչ-որ բան էլ թողել անպատասխան:

Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Հիմա քննարկո՞ւմ եք ընտրական օրենսգիրքը, թե՞ ոչ

Երեկ ՀԱԿ-ը ընտրական օրենսգրքի փոփոխությունների՝ շրջանառության մեջ դրված նախագծի առիթով տարածել է մի հայտարարություն, որտեղ ուլտիմատիվ ոճով ասվում է, թե ԸՕ-ի հետ կապված երկխոսություն կամ համագործակցություն կլինի քաղբանտարկյալներին ազատ արձակելուց եւ մարտի 1-ի սպանությունները բացահայտելուց հետո, եւ որ՝ այդպիսի քննարկումները պատրանք են ստեղծում, թե մինչեւ այժմյան ընտրությունների պատճառը անկատար օրենսդրությունն է, մինչդեռ գործող օրենսգրքով էլ կարելի է ազատ եւ թափանցիկ ընտրություններ կազմակերպել: Ըստ ՀԱԿ հայտարարության՝ եթե իրենք եւ որեւէ քաղաքական ուժ մտնեն քննարկման ԸՕ-ի վերաբերյալ՝ մասնակից կդառնան, հայտարարության տեքստով, «ընտրական կեղծիքների ու բռնության միջոցով իշխանության յուրացման ծանրագույն հանցանքը պարտակելուն»:

Այս բոլորով հանդերձ՝ հաջորդում է հայտարարության 5-րդ կետը. «Այնուամենայնիվ, Հայ ազգային կոնգրեսը, շահագրգռված ցանկացած օրենսդրական բաց լրացնելու մեջ՝ ԸՕ-ի վերաբերյալ իր առանցքային համարած 7 առաջարկներն ուղարկել է ԵԽ՝ լիազորելով վերջինիս եւ նրա հովանավորությամբ գործող, այս ուղղությամբ աշխատող կառույցներին՝ դրանք օգտագործելու համապատասխան քննարկումներում: Նրանք միաժամանակ տեղեկացվել են Կոնգրեսի սկզբունքային դիրքորոշման մասին, այն է՝ արդարացի ու թափանցիկ ընտրություն անցկացնելու համար, առաջին հերթին, Հայաստանում իսպառ բացակայում է իշխանության քաղաքական կամքը»:

Դե ասեք՝ մասնակցում եք, էլի, ԸՕ քննարկումներին, էլ մասնակցելը ոնց է լինում:

Մ. Խ.

ԱՍՈՒԼԻՍ

# Օմբուդսմենը լրագրողներին հրավիրել էր ասելու, որ նրանք կրկին հրավիրված են

«Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքի լրամշակման նպատակով ստեղծված, Հայաստանի մարդու իրավունքների պաշտպան (ՄԻՊ) Արմեն Հարությունյանի գլխավորությամբ գործող աշխատանքային խմբի 2-րդ նիստը կայացավ երեկ: Անմիջապես նիստից հետո ՄԻՊ գրասենյակում ասուլիս էր հրավիրվել: Արմեն Հարությունյանը տեղեկացրեց, որ նիստի ժամանակ քննարկվել են այն սկզբունքային հարցերը, որոնք, ըստ աշխատանքային խմբի, կա՛մ չկան օրենքում, կամ էլ լուծված չեն պատշաճ մակարդակով: «Մյուս նիստի ժամանակ վերջնական որոշելու ենք՝ նոր օրենքի՞, թե՞ արդեն գոյություն ունեցող օրենքի փոփոխությունների փաթեթ առաջարկել եւ ըստ դրա էլ կշարունակենք մեր աշխատանքը», ասուլիսի ժամանակ ասաց Արմեն Հարությունյանը: Վերջինս տեղեկացրեց, որ աշխատանքային խմբի նիստերը կայանալու են ամեն ուրբաթ օր: Աշխատանքային խումբը նաեւ 3 օր հանդիպել է Եվրոպայի խորհրդի եւ ԵԱՀԿ-ից հրավիրված փորձագետներին: «Աշխատանքային խմբի անդամներն ու փորձագետներն աշխատել են իրար հետ, մեր հետագա աշխատանքներում հաշվի կառնենք նաեւ փորձագետների կարծիքները», ասաց օմբուդսմենը:




Խոսելով կապուղիների մրցույթի մասին՝ Արմեն Հարությունյանը նշեց. «Կուզենայի, որ մրցակցությունները ավելի շատ լինեին, բայց մենք ունենք այն, ինչ որ ունենք»:

Հիշեցնենք, որ արդեն հայտնի են այն հեռուստաընկերությունների անունները, որոնք մասնակցում են կապուղիների մրցույթին: Նախատեսված 18 մրցույթից միայն երկուսում են ներկայացվել մեկից ավելի հայտեր: Այս մասին «Ազգը» գրել էր երեկվա համարում: Լրագրողների հարցին, թե որո՞նք են այն կարեւոր եւ սկզբունքային հարցերը, որոնք խմբի անդամները քննարկել են նիստում, օմբուդսմենը պատասխանեց.«Այսօր չէի ցանկանա կոնկրետ նշել այդ հարցերը: Մյուս նիստից հետո այդ ամենն արդեն կտանք մամուլի հաղորդագրությամբ»: Ընդամենն այսքան բան ասելու համար աշխատանքային օրվա վերջին օմբուդսմենը լրագրողներին հրավիրել էր ՄԻՊ գրասենյակ: Լրագրողները, օպերատորները շտապել էին ասուլիսի՝ դեռ մի օր առաջ մտածելով, թե պարոն Հարությունյանը նիստից հետո ի՞նչ կարեւոր տեղեկություն է հրապարակելու, այնինչ... Կատակը մի կողմ՝ տեղեկությունն իրապես կարեւոր էր՝ լրագրողներս իմացանք, որ հաջորդ նիստից հետո, հավանաբար ուրբաթ օրը, կրկին հրավիրված ենք ՄԻՊ գրասենյակ մամուլի հաղորդագրություններ ստանալու, եւ ո՞վ գիտի, միգուցե «ասուլիս» էլ լինի:

Ի. Պ.

# Նեոնատալ խնամքի սարքավորումները կօգնեն փրկելու նորածինների կյանքը

«Վիվասել-ՄՏՍ» ընկերության եւ BirthLink հասարակական կազմակերպության համագործակցության արդյունքում նեոնատալ խնամքի սարքավորումներ են տեղադրվելու Հայաստանի մարզերի բուժհաստատություններում: Չորս մարզերի հիվանդանոցների համար ձեռք են բերվել նեոնատալ խնամքի շուրջ 70 միլիոն դրամ արժողությամբ սարքավորումներ: Երեկ «Գոլդեն Թյուլիփ» հյուրանոցում՝ ասուլիսի ժամանակ «Վիվասել-ՄՏՍ» ընկերության գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանը տեղեկացրեց, որ նեոնատալ խնամքի սարքավորումները տեղադրվելու են Գեղարքունիքի, Տավուշի, Շիրակի, Սյունիքի մարզերում՝ Գյումրիի ծննդատանն ու մանկական հիվանդանոցում, Մարտունու, Սեւանի, Գորիսի, Կապանի եւ Բերդի ծննդատներում: Ասուլիսի ընթացքում ներկայացվեց նեոնատալ խնամքին ուղղված ծրագրի նոր փուլը: «Այն ծրագիրը, որը 2008 թվականից սկսել էինք ծննդաբերական բուժհաստատությունների հետ, շարունակվում է եւ շարունակվելու է», ասաց Ռալֆ Յիրիկյանը: 2010-ին ծրագրի ուշադրության կենտրոնում են լինելու ամենախոցելի մարզերն ու սահմանամերձ գյուղերը, որոնք աշխարհագրական դիրքի պատճառով չեն կարող օգտվել երեւանյան հիվանդանոցներից եւ չունեն համապատասխան սարքավորումներ հիվանդ նորածինների խնամքն ապահովելու համար:Նեոնատալ խնամքի սարքավորումների տեղադրումը կնպաստի, որ Հայաստանում նվազի մանկական մահացությունների թիվը: Աշխարհում ամեն տարի կյանքի առաջին տարվա ընթացքում ավելի քան 4 միլիոն մանուկ է մահանում: Դեպքերի 98 տոկոսն արձանագրվում է զարգացող երկրներում: Մահացության 65 տոկոսը գրանցվում է մանուկների կյանքի առաջին ամսվա ընթացքում: Առողջապահության համաշխարհային կազմակերպության վիճակագրական տվյալների համաձայն՝ Հայաստանում մանկական մահացության մակարդակն ավելի քան չորս անգամ գերազանցում է Միացյալ Նահանգներում եւ Մեծ Բրիտանիայում արձանագրված տվյալները:




Երեկ BirthLink ՀԿ-ի տնօրեն Քեթի Մելորը նշեց, որ ծրագիրն անցյալ տարի իրականացվել է Երեւանում. «Դա բավականին լուրջ ներդրում էր»: 2009-ին ծրագիրը ներառել է Երեւանի 11 հիվանդանոց՝ ապահովելով դրանք շուրջ 144 միլիոն դրամ արժողությամբ սարքավորումներով: Նեոնատոլոգ Արշակ Ձերջերյանը հավելեց. «Ինչ-որ թվեր ամբողջացնելու համար մի տարին, կարծում եմ, բավարար ժամանակ էր»: Ա. Ձերջերյանի փոխանցմամբ՝ Նեոնատալ բժշկության հայկական ասոցիացիայի հետազոտությունները պարզել են, որ Երեւանի ծննդօգնության հիմնարկներում մահացությունը նվազել է 25-35 տոկոսով:

Նեոնատալ խնամքի ծրագիրը, սակայն, չի ավարտվում միայն սարքավորումներ տեղադրելով: Միջազգային մասնագետները բուժհաստատություններում աշխատող բժիշկների եւ բուժքույրերի հետ անցկացնելու են վերապատրաստման դասընթացներ, որպեսզի բուժանձնակազմն առավել արդյունավետ օգտագործի նեոնատալ խնամքի սարքավորումները: Fisher & Paykel Healthcare ընկերության Մեծ Բրիտանիայի մասնաճյուղի ղեկավար Նիկոլաս Կոննոլին, որը զբաղվում է բժիշկների եւ բուժքույրերի վերապատրաստման աշխատանքներով, կարեւորեց սարքավորումների օգտագործման վերաբերյալ դասընթացները: «Գալիք առնվազն 5 տարիների ընթացքում ուրախ կլինենք աջակցել այդ վերապատրաստումներն իրականացնելու համար», հավելեց Նիկոլաս Կոննոլին:

«Վիվասել-ՄՏՍ»-ի գլխավոր տնօրենը տեղեկացրեց, որ մանուկներին օգնելու եւ փրկելու ծրագիրը շարունակական է լինելու:

ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԺԹ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*** / հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Անցուդարձ

## ՄԱԿ. Նախ խաղաղություն, հետո՝ փախստականների վերադարձ

Ներքին տեղահանված անձինք նախ եւ առաջ պետք է ունենան իրավունք ընտրելու՝ վերադառնա՞լ իրենց նախկին բնակության վայրերը, թե՞ ոչ: Այս մասին հայտնել է ներքին տեղահանված անձանց (IDP) իրավունքների հարցերով ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի ներկայացուցիչ **Վալտեր Կալինը**:

Հոկտեմբերի 21-ին ՄԱԿ կենտրոնատեղիում անդամ-երկրների հետ քննարկումներ են անցկացվել կազմակերպության հատուկ մանդատներ ունեցող ներքին տեղահանված անձանց (IDP) իրավունքների հարցերով ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի ներկայացուցիչ Վալտեր Կալինը եւ ՄԱԿ-ի մարդու իրավունքների պաշտպանների իրավիճակի հարցերով հատուկ զեկուցող **Մարգարետ Սեկագիան**, ովքեր առիթներ էին ունեցել վերջին շրջանում այցելելու Հայաստան:

Ինչպես տեղեկացնում է Հայաստանի արտգործնախարարությունը, Վալտեր Կալինի հետ հանդիպմանը մեկնաբանություններով հանդես են եկել Հայաստանի ու Ադրբեջանի պատվիրակությունները: Ադրբեջանական կողմը, իր մոտեցումներին ու կեղծարարությանը հարազատ մնալով, հայտարարել է, թե իբր Հայաստանի «ագրեսիայի» եւ «օկուպացիայի» հետեւանքով Ադրբեջանը «ունի ներքին տեղահանված անձանց ամենամեծ թիվը աշխարհում»: Բացի այդ, ադրբեջանական ներկայացուցիչները նշել են, թե ներքին տեղահանված անձինք պետք է իրավունք ստանան վերադառնալու իրենց նախկին բնակության վայրերը:

Հայաստանի ներկայացուցիչն, իր հերթին, անդրադարձել է Ադրբեջանի վարած անհանդուրժողական քաղաքականության, էթնիկ զտումների, բռնությունների եւ սանձազերծված պատերազմի հետեւանքներին, մասնավորապես հարյուր հազարավոր հայ ներքին տեղահանված բնակչության զրկանքներին ու հիմնախնդիրներին՝ ներկայացնելով ԼՂ հիմնախնդրի էությունը եւ տարածաշրջանային խաղաղությանը միտված Հայաստանի ու միջազգային հանրության ջանքերը:

Ի պատասխան Ադրբեջանի բարձրացրած հարցի՝ ՄԱԿ ԳՔ ներկայացուցիչը հայտարարել է, որ ներքին տեղահանված անձինք նախ եւ առաջ պետք է ունենան իրավունք ընտրելու՝ վերադառնա՞լ իրենց նախկին բնակության վայրերը, թե՞ ոչ, ու հավելել է, որ կարեւորում է, որպեսզի համապատասխան պայմաններ լինեն նրանց վերադարձի համար, որոնց նախադրյալները դեռեւս առկա չեն տարածաշրջանում: Կալինը կոչ է արել, որ շահագրգիռ կողմերը գործադրեն բոլոր ջանքերը խաղաղության համաձայնագիր կնքելու ուղղությամբ, որից հետո միայն հնարավոր կլինի արդյունավետորեն անդրադառնալ խնդրո առարկային:

ՄԱԿ-ի մարդու իրավունքների պաշտպանների իրավիճակի հարցերով հատուկ զեկուցող Մարգարետ Սեկագիան ելույթը սկսեց՝ ներկայացնելով իր տպավորությունները Հայաստան այցից, մասնավորապես նշելով, որ իր առաքելությունը լավ առիթ է հանդիսացել ծանոթանալու մարդու իրավունքների պաշտպանների իրավիճակին, եւ նա իր երախտագիտությունն է հայտնում Հայաստանի իշխանություններին հրավերի եւ առաքելության ընթացքում ցուցաբերած աջակցության համար: Նա նաեւ տեղեկացրել է, որ հաջորդ տարվա մարտ ամսին իր այցն ամփոփող զեկույցը կներկայացնի Ժնեւում գործող ՄԱԿ-ի մարդու իրավունքների խորհրդի հերթական նստաշրջանում:

Ա. Հ.

ՆԻՍՏ

## Հայաստան-Եվրոմիություն քաղաքական համագործակցությունն արդյունավետ զարգանում է

Հոկտեմբերի 22-ին կայացել է եվրոպական կառույցների հետ Հայաստանի պետական մարմինների համագործակցությունը համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի նիստը, որը վարել է հանձնաժողովի նախագահ, Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար **Արթուր Բաղդասարյանը**:

«Հայաստան-Եվրոմիություն քաղաքական համագործակցությունն արդյունավետ զարգանում է, կարող ենք արձանագրել, որ ՀՀ-ԵՄ հարաբերություններում էական առաջընթաց ունենք, 2009-2011 թվականների ծրագիրն իրականացվում է ըստ սահմանված ժամանակացույցի», փաստել է Արթուր Բաղդասարյանը՝ կարեւորելով ԵՄ-ի հետ Հայաստանի քաղաքական համագործակցության հետագա խորացումը, ասոցացման համաձայնագրի շուրջը բանակցությունների հաջող ընթացքը, ազատ առեւտրի համաձայնագրի կնքումը, որը հնարավորություն կտա առավել արդյունավետ զարգացնելու ՀՀ-ԵՄ տնտեսական հարաբերությունները, ինչպեսեւ՝ արդարադատության, ազատության եւ անվտանգության հարցերով ենթակոմիտեի շրջանակում համագործակցության խորացումը:

«Մենք կարողացանք ԵՄ-ի հետ համագործակցության շրջանակում Հայաստանում հիմնադրել դիվանագիտական ակադեմիա, ինչը լուրջ ձեռքբերում է: Գալիք տարի թերեւս կունենանք նաեւ արդարադատության ակադեմիա, եւ դա հնարավորություն կտա առավել արդյունավետ լուծելու իրավապահ ոլորտում կադրերի պատրաստման եւ վերապատրաստման խնդիրները», ասել է Արթուր Բաղդասարյանը:




Հայաստան-Եվրոմիություն ասոցացման համաձայնագրի շուրջը տարվող բանակցությունների ընթացքը ներկայացրել է արտաքին գործերի փոխնախարար **Կարինե Ղազինյանը**: ՀՀ-ԵՄ ասոցացման համաձայնագրի բանակցությունների թիմն արդեն երկու լիագումար նիստ է գումարել, տեղի են ունեցել տեսակոնֆերանսներ: Քննարկվել են համաձայնագրի հիմնական նպատակներին, ընդհանուր սկզբունքներին, քաղաքական երկխոսությանը եւ բարեփոխումներին, արտաքին եւ անվտանգության քաղաքականության ոլորտներում համագործակցությանը վերաբերող հարցեր:

Արդարադատության նախարարի տեղակալ Նիկոլայ Առուստամյանը ներկայացրել է արդարադատության, ազատության եւ անվտանգության հարցերին վերաբերող քննարկումների արդյունքները:

Նիստում ամփոփվել է Եվրոպական հարեւանության քաղաքականության ՀՀ-ԵՄ գործողությունների ծրագրի կատարումն ապահովող միջոցառումների ցանկի 2010 թվականի երրորդ եռամսյակի գործողությունների կատարողականը: Հանձնաժողովի անդամները ներկայացրել են բոլոր ուղղություններով կատարված աշխատանքները:

**Ազգային անվտանգության խորհրդի քարտուղարի մամուլի գրասենյակ**

## Orange-ը ներկայացնում է HD ձայնի հնարավորությամբ նոր հեռախոս




**Orange-ը համալրում է իր հեռախոսների պորտֆոլիոն HD բարձր հստակության ձայնի հնարավորություն ունեցող նոր սմարթֆոնով՝ Nokia 5230-ով: Այս նորաոճ սմարթֆոնը, որն արդեն վաճառքում է Orange-ի խանութներում, ընտրության ավելի մեծ հնարավորություն կտա այն բաժանորդներին, ովքեր պահանջկոտ են ինչպես հեռախոսային խոսակցության ձայնի որակի, այնպես էլ հեռախոսի դիզայնի նկատմամբ:**

**Վառ, աչքի ընկնող Nokia 5230-ը նորարար դիզայնի եւ գերարդիական տեխնոլոգիաների համատեղում է, որը թույլ է տալիս մատի մի հպումով ունենալ ժամանցի բազմազան ծառայություններ: Symbian օպերացիոն համակարգով աշխատող եւ սենսորային էկրանով այս սմարթֆոնն աշխատում է ինչպես 2G, այնպես էլ 3G+ ցանցերում: Սմարթֆոնը համալրված է նաեւ GPS-ով եւ ունի Nokia Maps ծառայությունը:**

**Հիշեցնենք, որ Orange Արմենիան աշխարհում երկրորդ օպերատորն է, որն իր ցանցում ներդրել է Wideband AMR* տեխնոլոգիան կիրառող HD ձայնի ծառայությունը, որի շնորհիվ մարդկային ձայնի բոլոր նրբերանգները լսելի են դառնում եւ նշանակալիորեն նվազեցվում է ֆոնային աղմուկը՝ ստեղծելով տպավորություն, թե զրուցակիցները իրար կողքի են գտնվում:**

## Կլոր, թե քառանկյունի դահլիճ՝ կարեւորը բովանդակությունն է

*1-ին էջից*

Բայց վերադառնանք իսկապես ուրախալի իրադարձությանը՝ խորհրդարանի վերակառուցված դահլիճի հանդիսավոր բացմանը: Եկել էր երկրի նախագահը, որը մի շատ սրտառուչ խոսք ասաց, Ամենայն հայոց կաթողիկոսն օրհնեց օվալը, վարչապետ Տիգրան Սարգսյանն ու բազմաթիվ այլ հյուրեր էին ներկա:

Նախագահ Սարգսյանը շնորհավորեց ներկաներին՝ վերակառուցված դահլիճի բացման առթիվ. «Առաջին իսկ հայացքից տպավորված եմ արդյունքով: Իրոք, մենք ստացել ենք շատ ժամանակակից եւ աշխատելու համար հարմարավետ դահլիճ», ասաց նախագահը: Առանձնացնելով նրա խոսքի որոշ հետաքրքրական հատվածներ՝ նշենք, որ նախագահը հատկապես շեշտեց ոչ միայն խորհրդարանի օրենսդիր առաքելությունը, այլեւ կարեւորագույն դերակատարումը իշխանությունների տարանջատման, հավասարակշռման գործում. «Այս առումով, ուզում եմ նաեւ գոհունակությամբ արձանագրել, որ խորհրդարանը Հայաստանի համար ծանր ժամանակաշրջանում գործադիրի հետ կիսեց երկիրը ֆինանսատնտեսական ճգնաժամից դուրս բերելու լուծը, վերցրեց եւ կրեց պատասխանատվության իր բաժինը: Իրոք, կառավարության հակաճգնաժամային բոլոր հիմնական նախաձեռնություններն աջակցություն են ստացել խորհրդարանում, ինչի շնորհիվ ժամանակին եւ անհրաժեշտ ծավալով ծրագրերը կիրառվել են: Աշխարհը ցնցած ու մեր տնտեսությունից տասնյակ անգամ ավելի հզոր տնտեսություններ ծնկի բերած ճգնաժամի ծավալման ամիսներին գործադիր եւ օրենսդիր իշխանությունների համահունչ, ներդաշնակ ճիշտ քայլերի արդյունքում վայրկյան անգամ չուշացան, եւ չկրճատվեցին ուսուցչի աշխատավարձն ու տարեցի կենսաթոշակը, չդադարեց բանակի մարտունակության անընդհատ բարձրացման տեմպը», նկատեց նախագահ Սարգսյանը՝ հավելելով, որ ժողովրդի «ստեղծագործական ձիրքն ու տաղանդը դրսեւորվել են մայրաքաղաքի այս հիասքանչ կառույցում՝ խորհրդարանի շենքում, որը քսաներորդ դարի հայ ճարտարապետության լավագույն ձեռքբերումների արտացոլումն է», եւ վստահություն հայտնելով, որ այստեղ երբեք չեն դադարելու մեր պետականության ու ժողովրդավարության ամրապնդմանն ուղղված ջանքերը:

«Ազգային ժողովի նիստերի վերանորոգված եւ ձեւափոխված դահլիճը յուրատեսակ նվեր է եւ հարգանքի արտահայտություն Հայաստանի երրորդ հանրապետության՝ այս տարի 20 տարեկան դարձած խորհրդարանին», իր խոսքում նշեց ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանը՝ կարծիք հայտնելով, որ ժամանակի պահանջներին բավարարող, բայց եւ պառլամենտարիզմի ոգուն համահունչ նիստերի դահլիճ ունենալը կարեւոր էր պատգամավորների աշխատանքային պայմաններն արդիականացնելու, օրենսդիր մարմնի աշխատանքներն արդյունավետ կազմակերպելու եւ խորհրդարանի դերի հանրային ընկալման տեսանկյունից:

Նա խոսեց դահլիճի օվալաձեւ կառուցվածքի խորհրդից՝ «կլոր սեղանը համարվում է համագործակցության, նպատակամետ քննարկումների խորհրդանիշ, քանի որ տրամաբանորեն կլոր սեղանի շուրջը զրուցակիցները շարժվում են ոչ թե ճակատային ու միմյանց հանդեպ անձնավորված գրոհների, այլ հիմնախնդրի լուծման արդյունավետ ուղիների փնտրտուքի ճանապարհով»: ԱԺ նախագահը վստահություն հայտնեց, որ նոր դահլիճում տիրապետող կլինի ասպետական ոգին (դրանից առաջ խոսել էր 12-րդ դարի ու Արթուր թագավորի մասին), որն առաջին հերթին կարտահայտվի փոխադարձ հարգանքով ու այլոց կարծիքների հանդեպ հանդուրժողականությամբ.« Դա ամենեւին չի նշանակում, որ այս դահլիճում պիտի բացակայի մրցակցությունը, բանավեճը, քննադատությունը: Ոչ իհարկե: Դրանք քաղաքական կյանքի անբաժանելի տարրերն են, բայց չպետք է դառնան մեր անցուդարձի ու կյանքի ինքնանպատակ դրսեւորումները»: Նա նշեց, որ խորհրդարանը մարդկանց ավելի հասկանալի եւ ավելի մոտ ու ընկալելի դարձնելու խնդիր ունենք, ու անգամ այդ ուղղությամբ քայլեր արվել են. «Շատերի համար Ազգային ժողովն արդեն իսկ դադարել է խորհրդավոր ու բազմաթիվ դռների հետեւում թաքնված փակ կառույց լինելուց: Մենք ջարդեցինք խորհրդավորության այդ պատկերացումները: Բայց մենք նաեւ Ազգային ժողովի խորհուրդն ամրապնդելու, նրա հաստատուն հարգանքն ու ժողովրդականությունն անընդհատ ավելացնելու խնդիր ունենք: Սա անելու ենք աշխատանքով, անելու ենք հավատով: Այլ ճանապարհ չկա: Եվ միշտ պետք է հիշենք, որ անհատը պատգամավոր է ընտրվում որոշակի ժամանակահատվածի համար միայն, իսկ խորհրդարանի դերն ու անունը կերտվում են ապագայի համար: Սա է, որ պիտի հիշենք ամեն օր աշխատանքի գալիս: Մեր աշխատանքի կոնկրետ արդյունքներով շարունակելու ենք ցույց տալ, որ միշտ կարողացել ենք բաց ու հստակ խոսել, խոսել ազնիվ, անգամ ամենաբարդ հիմնահարցերի մասին, երբեւէ չմոլորեցնել որեւէ մեկին, լինել խոսքի տեր, հետեւողականորեն հասնել մեր միասնական նպատակին, որը մեր պետության ամրապնդումն է: Իսկ դա հնարավոր չէ առանց հանրային աջակցության, վստահության, առանց այն քաղաքացիների, ովքեր սատարում են այդ նպատակը, ովքեր ցանկանում են ապրել բարեկեցիկ ու լավ պետությունում: Այսօր մենք հենց այդ փոփոխությունների ճանապարհին ենք»:

Ահա այսպիսի գեղեցիկ մտքեր ասաց Հայաստանի խորհրդարանի նախագահը ԱԺ նոր դահլիճի բացման առիթով, նոր քառօրյայից երկու օր առաջ:

# Օրուան պահանջքը՝ աթոռակից պատրիարքի ընտրութիւն

Յառաջիկայ նոյեմբեր 8, 9, 10 շաբաթասկզբին, Երուսաղէմի Սուրբ Յակոբայ միաբանութիւնը պիտի ունենայ միաբանական ընդհանուր ժողովը, որուն հրաւիրուած են բոլո՛ր միաբանները, ներքին եւ արտաքին:

Միաբանութեան ընդհանուր թիւն է 38 հոգեւորական, ի գլուխ ունենալով պատրիարք հայրը, 9 արքեպիսկոպոսներ եւ 28 վարդապետներ եւ աբեղաներ: Երեք արքեպիսկոպոսներ եւ 18 վարդապետներ միայն կը ծառայեն վանքէն ներս: Վեց արքեպիսկոպոսներ եւ 10 վարդապետներ կը ծառայեն Հայաստանեայց եկեղեցւոյ թեմերէն ներս:

Թէ քանի՞ հոգեւորական պիտի բերէ իր մասնակցութիւնը նոյեմբերին գումարուելիք այս խիստ եւ անհրաժեշտ միաբանական ընդհանուր ժողովին, չենք գիտեր:

Բազմաթիւ լուրջ հարցեր կան լեռնացած պատրիարքութեան օրակարգին վրայ, որոնք պատրիարք հօր՝ Թորգոմ արք. Մանուկեանի յառաջացած տարիքին եւ անկարողութեան մատնուած ըլլալուն պատճառաւ, անդամալուծուած են հաստատութեան գործերը: Անփառունակ իրավիճակ մը կը տիրէ վանքէն ներս: Գրած ենք անցեալին եւ ամենայն պատասխանատուութեամբ կը կրկնենք այսօր ալ. խեղճութիւն, թշուառութիւն, ծուլութիւն, անհոգութիւն, անհամերաշխութիւն, բամբասանք, պատասխանատուութեան գիտակցութեան պակաս... դժբախտաբար արմատ նետած են վանքի անմիաբան միաբանութեան «հոգեւոր կեանքէն» ներս:

Ինչպէ՞ս պատահեցաւ այս իրավիճակը, մանաւանդ երբ Ամեն. Տ. Թորգոմ պատրիարք իր գահակալութեան առաջին օրերէն սկսաւ ծրագրային աշխատանքի յոյս ներշնչելով չորս դին: Կարծես ամէն ինչ լաւ կ'ընթանար: Շինարարութիւն, եկեղեցական եւ մշակութային կեանք, կարգ ու կանոնի հաստատում եւ արդիականացման նոր սիստեմ վանքին տարբեր հաստատութիւններէն ներս: Արտաքին երեւոյթնե՞ր էին այդ ամէնը, որուն «փլատակները» մնացած են այժմ, թէ՞ ոչ... ժողովրդային իմաստութեամբ ըսուած՝ «առիւծը երբ ծերանայ, աղուէսները պար կը բռնեն»:

Ու տեսանելի է այդ պարը, որուն աղմուկին արձագանգները կը հասնին Խաղաղականի ալ ափերը:

Մտահոգ է Երուսաղէմի պատրիարքը: Մտահոգ են սաղիմահայերը: Մտահոգ են Հայաստանեայց եկեղեցւոյ սպասաւորները... արդեօ՞ք:

Ամեն. Տ. Թորգոմ արք. Մանուկեան, որուն պատրիարքութեան գահակալութեան 20-ամեակը նշուեցաւ այս տարի, շուտով կը թեւակոխէ ծննդեան 92-րդ տարիքը: Ուրախ ենք, որ մեր սիրելի պատրիարք հայրը ողջ-առողջ է: Ծերութիւնը անխուսափելի է: Աղօթող եղած ենք եւ կը շարունակենք ըլլալ, հայցելով որ Տէրը քաջառողջութիւն եւ երջանիկ օրեր պարգեւէ պատրիարք հօր: Սակայն յառաջացեալ տարիքը իր հետ կը բերէ ծերութեան բարեկամները... տեսողութեան, լսողութեան, քալելու, շարժելու, մտածելու, խօսելու որոշ դժուարութիւններ եւ մանաւանդ աշխատանքի անկարողութիւն: Վիճակ մը, որուն մատնուած է այսօր պատրիարք հայրը, որ 70 տարի անսակարկօրէն ծառայեց Հայաստանեայց եկեղեցւոյ:

Որքա՜ն պիտի ուզէինք, որ պատրիարք հայրը իր յառաջացեալ տարիքին հանգիստ կեանք մը ունենար, երջանիկ ըլլար, տեսնելով եւ վայելելով իր ծառայութեան վաստակը:

Դժբախտաբար իրավիճակը տարբեր է: Պատրիարքը կ'ապրի տառապալից եւ մտահոգութիւններով լի օրեր: Ըսինք, բազմաթիւ լուրջ հարցեր կան լեռնացած պատրիարքութեան օրակարգին վրայ: Տնօրէն ժողովի նոր անդամներու ընտրութիւն, պատրիարքութեան պիւտճէի հարց, Սուրբ Աթոռի հաստատութեանց դիմագրաւած դժուարութիւնները, Ժառանգաւորաց վարժարան, Սրբոց Թարգմանչաց վարժարան, տպարան, մատենադարան, թանգարան, կալուածական, ելեւմտական, սրբատեղեաց, շինարարական, միջյարանուանական եւ այլ հարցեր, որոնք անդամալուծուած են պատրիարքութիւնը վերջին հնգամեակին:

Վերոյիշեալ բոլոր դժուարութիւններուն արմատը՝ հարցերը լուծելու եւ տնօրինելու անկարողութիւնն է:

Եւ հո՛ն է, որ կը կաղայ ամէն ինչ:

Պատրիարք հայրը լաւ գիտէ այդ: Գիտեն նաեւ ողջախոհ հոգեւորականները:

Ահա թէ ինչո՞ւ պատրիարք հայրը պատրիարքական փոխանորդ նշանակած էր միաբանութեան լուսարարապետ՝ գերշ. Տ. Նուրհան արք. Մանուկեանը:

Արդի՞ւնքը: Հարցերը մնացին անլոյծ:

Ի՞նչն էր պատճառը: Իրաւասութիւններու սահմանափակում... Պատրիարք հօր յառաջացեալ տարիքի դժուարութիւններ.... անհասկացողութիւն եւ այլ միաբանական ներքին հարցեր, որոնք թուեցինք սկիզբը:

Եւ այժմ՝ ի՞նչն է օրուան պահանջքը:

Առանց ծամծմելու բառերը՝ ըսենք շատերու կողմէ դժուար արտասանուող այդ երեք բառերը...

Աթոռակից պատրիարքի ընտրութիւն:

Նոյեմբերին կայանալիք միաբանական ժողովը պիտի քննարկէ բազմաթիւ հարցեր եւ լուծումներ որոնէ: Սակայն առանց աթոռակից պատրիարքի մը ընտրութեան՝ «աղուէսներու պարը» պիտի շարունակուի:

Սահմանափակ իրաւասութիւններով պատրիարքական փոխանորդի մը ընտրութեամբ հարցերը չեն լուծուիր:

Չլուծուեցան: Փորձը ունեցանք:

Անցեալին՝ Երուսաղէմի պատրիարքութիւնը ունեցած է աթոռակից պատրիարքներ: Եւ կանխելու համար որեւէ առարկութիւն, պատմութեան համար արձանագրենք...

1.- Յովհաննէս Գ. Ճոսլին 1341-1353:

Աթոռակից եղաւ Վարդան Արեւելքցին:

(Ձեռագիր թիւ 1863)

2.- Մկրտիչ Բ. 1366-1381: Աթոռակից եղաւ Գրիգոր Գ. պատրիարքին:

3.- Եսայի Բ. 1390-1393: Աթոռակից եղաւ Գրիգոր Դ. Եգիպտացի պատրիարքին:

4.- Սարգիս Բ. 1393-1417: Յաճախակի ճամբորդութիւններուն պատճառաւ, իր բացակայութեան նշանակած էր մի քանի աթոռակիցներ:

Մարտիրոս եպիսկոպոս՝ 1399-ին:

Մեսրոպ եպիսկոպոս՝ 1402-ին:

Պօղոս եպիսկոպոս Կարնեցի՝ 1415-ին:

5.- Եսայի Գ. 1430-1439: Աթոռակից եղաւ Մարտիրոս Ա. Եգիպտացի պատրիարքին:

6.- Միւռոն՝ 1436-1437 եւ Յովհաննէս Ե. 1439-1445: Նոյնպէս աթոռակից եղան Եսայի Գ. պատրիարքին:

7.- Մեսրոպ Բ. 1454-1461: Աթոռակից եղաւ Աբրահամ Ե. Մըսրցի պատրիարքին:

8.- Պետրոս Ա. 1461-1476: Աթոռակից եղաւ Մեսրոպ Բ. պատրիարքին:

9.- Մկրտիչ Բ. Ելովեցի 1476-1479: Աթոռակից եղաւ Պետրոս Ա. պատրիարքին:

10.- Դաւիթ Բ. Մերտինցի 1583-1613: Աթոռակից եղաւ Անդրէաս Մերտինցի պատրիարքին:

11.- Մինաս Գ. Համդեցի 1698-1702: Աթոռակից եղաւ Յովհաննէս Է. Պոլսեցի պատրիարքին:

12.- Յովհաննէս Կոլոտ, 1713: Աթոռակից եղաւ Սահակ եպս. Ապուշխեցիին: (Հայ պատրիարքներ Երուսաղէմի, 2005, Հայկ Գրիգորեան):

Սուրբ Աթոռի պատմութեան մէջ եղած են շրջաններ, ուր աշխարհական հոգաբարձուներով տնօրինուած են վանքին հարցերը:

Քսանմէկերորդ դարու առաջին տասնամեակը դժուարին օրեր եղան մեր վանքին համար: Ներկայ իրավիճակը յուսալքումի կ'առաջնորդէ ու կրնայ քայքայել արդէն իսկ անմիաբան միաբանութիւնը:

Հարցը լուրջ է, չըսելու համար ահազանգային:

Հոգեւոր կեանք անգամ չկայ վանքէն ներս:

Ի՞նչ ըսել է... Լուսարարապետ սրբազանը ստիպուած կ'ըլլայ վարդապետներուն ամսականներէն զեղչել, քանի անոնք կը թերանան եկեղեցի յաճախել:

Ի՞նչ ըսել է... վանական վարդապետ մը երկու ամիսէ ի վեր պատարագ անգամ կը թերանայ մատուցանելու:

Ի՞նչ ըսել է... նոր սերունդի արաբախօսութիւնը հայոց դարաւոր վանքէն ներս, հո՛ն ուր Սրբոց Թարգմանչաց վարժական կայ, եկեղեցիներ կան, հարուստ մատենադարան եւ հայ ակումբներ կան:

Ի՞նչ ըսել է... վանքի հաշուապահական գրասենեակէն 175.000 դոլար եւ այլ ոսկեայ դրամներ գողնալ:

Ի՞նչ ըսել է... գողութենէն ամիսներ ետք, հոգեւորական մը 80.000 դոլար իսրայէլեան լոթօ շահած է եղեր, մինչ՝ երկու այլ վարդապետներ կարգաթող՝ կը փախչին վանքէն առանց լուրի:

Ինչո՞ւ քննութիւններ չկատարուեցան, պատժելու համար վանքի «ներքին գողերը», որոնք ցարդ կը մնան անյայտ:

Ի՞նչ ըսել է... վարդապետներու բամբասանքը իրարու դէմ: Ո՞ւր մնաց «հոգեւոր եղբայր ի Քրիստոս» հասկացողութիւնը, ըմբռնումը, ճշմարտութիւնը:

Ի՞նչ ըսել է... վարդապետները «քոմիսիոն»-շահաբաժին կ'ուզեն գործ մը ձեռնարկելէ առաջ:

Ի՞նչ ըսել է միաբանութեան ատելավառ վերաբերմունքը իրարու հանդէպ: Նոյնիսկ Աստուծոյ բարեւը՝ «բարի լոյսը» կը զլանան իրար տալու:

Ի՞նչ ըսել է հայ ուխտաւորներու եւ հայ հաւատացեալներու կողմէ աղօթքներով ասեղնագործուած ուխտի նուէրները՝ վարագոյրներ, սկիհի ծածկոցներ Ս. Յակոբայ տաճարին նուիրուած, գողնալ եւ քանիերորդ անգամը ըլլալով ծախու հանել Լոս Անճելըսի մէջ:

Ո՞վ ունի պատասխանը վերոյիշեալ հարցումներուն:

Կ'ուզենք վստահեցնել մեր ընթերցողները. ո՛չ հաճելի են այս տողերը արձանագրել թուղթին վրայ եւ ո՛չ ալ՝ հաճելի է ընթերցումը այս ցաւերուն: Արիւն կը կաթի մեր գրիչէն եւ արցունք՝ մեր աչքերէն:

Բայց պէտք է գրել եւ ըսել ճշմարտութիւնը, մանաւանդ այս ահազանգային իրավիճակին ի տես:

Վերոյիշեալ ցաւերը երէկ չպատահեցան: Բայց վերջին հնգամեակին օրէ օր բազմապատկուեցան անոնք մեր ժողովուրդէն անկախ, թարախակալ վէրքի նման:

Լաւատես էինք: Սպասեցինք, որ պատրիարք հայրը իր մականը շարժէր:

Չըրաւ: Չկարողացաւ:

Մտահոգութիւնները գրկեց ու անոնց տակ սկսաւ կքիլ:

Եւ ահա՛ հո՜ս հասանք:

Այսօր վանքին հարցերը լուծելու համար հարկ չկայ վիզէն շղթայ մը կրելու, սակայն հա՛րկ կայ երջանկայիշատակ Գրիգոր Շղթայակիր, Գրիգոր Պարոն Տէր պատրիարքներու օրինակելի նուիրումը ունենալ, զոհողութիւնը, իմաստութիւնը, վարքն ու կենցաղը ունենալ, դուրս բերելու վանքը իր այս տագնապալի օրերէն:

Կը հաւատանք, որ օրուան պահանջքն է աթոռակից պատրիարքի ընտրութիւնը, մանաւանդ նկատի ունենալով պատրիարքութեան դիրքը, որ այսօր գործ ունի երեք պետութիւններու հետ՝ Իսրայէլի, Պաղեստինի եւ Յորդանանի: Գործ ունի տարբեր յարանուանութիւններու հետ, որոնց հետ միասին պահապանն է Սուրբ քաղաքի սրբատեղիներուն, եւ այսօր մեր տկարութեան պատճառաւ յաճախ բախումներ կ'ունենանք յոյներու հետ, որոնք ինչպէս անցեալին, այսօր եւս հայոց դարաւոր իրաւասութիւնները խնդրոյ առարկայ կը դարձնեն:

Նկատի ունենալով Միջին Արեւելքի քաղաքական աննպաստ պայմանները եւ ապագայի անորոշ եւ աննախատեսելի դժուարութիւնները, հարկ է իմաստութիւնը ունենալ աթոռակից պատրիարքի մը ընտրութեամբ վերականգնել մեր պատրիարքութիւնը, վերահաստատել կարգն ու կանոնը վանքէն ներս, Քրիստոսի սէրով տոգորել մեր անհամերաշխ միաբանութիւնը, հոգեւոր եւ մշակութային կեանքով ներշնչում յառաջացնել, որպէսզի Սիոնի բարձունքէն շարունակուի հայուն հանապազօրեայ աղօթքն ու փառաբանանքը, շարունակուի հայ ուխտաւորներու շարանը՝ հո՛ն ուր կը հանգչին աճիւնը Ս. Յակոբայ Տեառնեղբօր եւ գլուխը՝ Ս. Յակոբին:

Հայ ժողովուրդը իր միահամուռ ուժերով եւ ի մասնաւորի սաղիմահայութիւնը միշտ զօրավիգ եղած են Սուրբ Աթոռին եւ դարաւոր մեր պատրիարքութեան: Այսօր եւս, ամէն ժամանակէ ալ աւելի, հայ ժողովուրդը ի սփիւռս աշխարհի, կարիքը ունի հոգեւոր զարթօնքի, հոգեւոր կեանքի, Աստուծոյ ձայնին:

Այսօր նիւթական կեանքի ընձեռած հաճոյքներուն՝ թէկուզ տնտեսական ծանր իրավիճակին մէջ, մարդիկ տակաւ կը հեռանան Աստուծմէ, կը հեռանան եկեղեցիէն, հայրենիքէն եւ ահաւորը՝ սարսափելին՝ հայութենէն:

Ահա թէ ինչո՞ւ հարկ է ի գին ամէն զոհողութիւններու, ողջախոհութեամբ եւ իմաստութեամբ վերականգնել հոգեւոր կեանքը եւ առաքելութիւնը Երուսաղէմի պատրիարքութեան, փշրելով «Ես»-երն ու կիրքերը եւ ներշնչում յառաջացնելով Սիոնի բարձունքէն:

Ի՞նչ վիճակի մէջ ալ գտնուի այս դարաւոր հաստատութիւնը, մերն է, հայութեան կը պատկանի... Հայաստանեայց եկեղեցւոյ առաքելաշաւիղ մե՛ր Սուրբ Աթոռն է:

Յոյնը, լատինը, ղպտին, եթովպիացին, ասորին պիտի չփրկեն մեր պատրիարքութիւնը, այլ Սուրբ Աթոռին իրենց ուխտը կատարած Հայաստանեայց եկեղեցւոյ միաբանութիւնը... Երուսաղէմի միաբանութիւնը՝ ի պահանջել հարկին աշխարհական նուիրեալ եւ միացեալ ուժերով պէտք է փրկէ մեր նուիրապետական Երուսաղէմի Սուրբ Աթոռը:

Վիճակը ծանր է եւ լուրջ: Կրնայ ահազանգային ըլլալ շուտով, եթէ չէ եղած արդէն:

Պարոյր Սեւակը պիտի ըսէր. «Դիմում եմ պահանջելու պէս...»: Աթոռակից պատրիարքի ընտրութիւնը. որ ՕՐՈՒԱՆ ՊԱՀԱՆՋՔՆ է:

Վաղը ուշ է:

Լսող կա՞յ...

**ՆԱՀԱՊԵՏ ՄԵԼՔՈՆԵԱՆ**
**Լոս Անջելես, ԱՄՆ**



# Կովկասի մոլագարը

*1-ին էջից*

**Որեւէ մեկն, իհարկե, նրան լրջորեն չի հավատում: Որովհետեւ մտագարություն է «չի ստեղծվելու» ասել մի պետության մասին, որ արդեն ստեղծված է, գործում է: Իսկ կառավարության անդամների մեջ, պետք է հուսալ, կան գիտակից մարդիկ, որ իրականությունը տեսնում եւ գնահատում են: Բայց նրանք այնքան խելոք են, որ «հիմարի հետ չեն վիճում»: Քանի որ իշխանություն ունեցող «հիմարը վտանգավոր գազան է»: Ամեն պահի կարող է հոշոտել իր «իմաստնությանը» կասկածողին:**

**Հո չե՞ն գժվել, որ հակաճառեն: Մանավանդ որ «խելագարը» ոչ միայն ինքն է հարստանում, այլեւ հնարավորություն է տալիս, որ իր մտավարժանքներն անծպտուն լսողներն էլ «մաս լիզեն»: Շուրջ 3 միլիարդ դոլարի հասնող «ռազմական ծախսերից», օրինակ, միայն 1,1-ն է ուղղակի հասկացվելու բանակին: Մնացածը կիրացվի «պաշտպանության բնագավառում պետական այլ նպատակային ծրագրեր» ձեւակերպմամբ: Ինչո՞ւ չօգտվել: Եվ, պարզվում է, լավ էլ օգտվում են:**

**Դատարանն ապացուցել է, որ «անհայտ անձի կողմից» սպանված գեներալ Ռահիլ Ռզաեւի ծառայողական սեյֆում «հայտնաբերվել է 200000 եվրո»: Եվ իրավահաջորդը՝ սպանված գեներալի որդին, պահանջում է, որ դատախազության կողմից «որպես իրեղեն ապացույց» առգրավված գումարը վերադարձվի իրեն: Կարծես հանգուցյալ գեներալն այդ փողերը «հետ էր գցել» աշխատավարձից:**

**Ահա այսպես: Դատավորի կնոջը մայրաքաղաքի կենտրոնում խեղդամահ են անում, իրավապահներն իսկույն «պարզում են», որ «հանցագործը նախկինում դատված Խալիդա Ահմեդովան է, որին սպանվածը ամսական 5 տոկոս դրույքով 10 000 մանաթ էր պարտք տվել»: Եվ սա այն դեպքում, երբ պաշտոնական վիճակագրության համաձայն ադրբեջանական ընտանիքների ընդամենը 1,5 տոկոսն է, որ ամսական 1500 մանաթ դրամական եկամուտ ունի:**

**Իսկ Կովկասի մոլագարը կառավարության նիստում հրապարակում է «իրական արդյունքներ»: Եվ նախարարները լսում ու «հավատում են, որ մոտ է այն օրը, երբ կվերականգնվի Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը՝ ինչ գնով էլ լինի»:**

**«А народ безмолствует»,- կասեր ռուս դասականը:**

**Այդպես եղել է միշտ. երբ երկրի առաջնորդը մոլագար է, մարդիկ գերադասում են լռել: Կամ աղաղակել՝ «հայլ Հիտլեր»: Կամ՝ «կեցցե ընկեր Ստալինը»:**

**Անձի թերարժեքությունը բացառապես իր խնդիրն է այնքան ժամանակ, քանի դեռ այլոց նկատմամբ ոտնձգությունների չի դիմում: Երբ նրա արարքները հասնում են «թույլատրելի կոմպլեքսավորվածության» սահմանը, հասարակությունը նրան մեկուսացնում է:**

**Քաղաքական «մանիակը» նույնպես ենթակա է մեկուսացման: Պետության ինքնիշխանությունը եւ պաշտոնեական անձեռնմխելիությունը տվյալ դեպքում ստորակա են համամարդկային շահերին, միջազգային անվտանգությանը: Մոլագարի հետ չեն բանակցում: Նրան ուղարկում են «հարկադիր բուժման»:**

**Կովկասի մոլագար Իլհամ Ալիեւը կարծես ենթակա է լուրջ ախտորոշման: Ինչպիսի՞ն կլինի քաղաքական «կոնսիլիումի» վճիռը՝ մեծապես դրանից է կախված տարածաշրջանի ժողովուրդների ապագան:**

# Զարդուշտ Ալիզադեն Բաքու է հրավիրում ԼՂՀ ղեկավարությանն ու կուսակցություններին

«Մենք պետք է դադարեցնենք սպառնալիքներ տեղալ, մենք պետք է երկխոսություն սկսենք ԼՂ դե ֆակտո ղեկավարության, այնտեղի կուսակցությունների ներկայացուցիչների ու առհասարակ ազգաբնակչության հետ: Մենք պետք է էթնիկ ատելության քարոզչությունը փոխարինենք Ղարաբաղի ժողովրդին համոզելով, որ Ադրբեջանում ապրելը անվտանգ է եւ բխում է նրա տնտեսական շահերից», այս կարծիքի հեղինակը ադրբեջանցի հայտնի քաղաքագետ **Զարդուշտ Ալիզադեն** է: Քաղաքագետը ադրբեջանական կայքին տված հարցազրույցում եւս մեկ անգամ շեշտել է, որ հարցի ռազմական ճանապարհով լուծումը միայն էլ ավելի վնաս կհասցնի կողմերին. «Ես կարծում եմ, որ մինչեւ Մոսկվայից կամ Արեւմուտքից համապատասխան հրահանգ չինչի, ո՛չ Երեւանը, ո՛չ Բաքուն պատերազմ չեն սկսի», ասել է Ալիզադեն՝ հավելելով, որ հակամարտության չլուծված լինելու հանգամանը ձեռնտու է նաեւ Հայաստանի ու Ադրբեջանի ղեկավարությանը, որոնք «հրաշալի առիթ են ստացել անընդհատ Ղարաբաղ շահարկելով, քաղաքական միավորներ ստանալ ժողովրդից»:

Անդրադառնալով Մինսկի խմբի գործունեությանը՝ ադրբեջանցի քաղաքագետը նախ ընդգծել է, որ երեք երկրներն էլ «Հայաստանին օգնում են, այդ թվում՝ ֆինանսա-տնտեսական առումով», ապա նաեւ, շեշտելով, որ Հայաստանը եռանախագահներից մեկի՝ Ռուսաստանի ռազմաքաղաքական միակ հենասյունն է Կովկասում, ասել է. «Եթե հանկարծ Երեւանը Մոսկվայի կամքին հակառակ քայլ թույլ տա իրեն, այդ թվում՝ Ղարաբաղի հարցում, ապա Ռուսաստանն անմիջապես կփոխի «հրամանատարին», այսինքն՝ ՀՀ նախագահին, ինչպես դա եղավ 1998-ին»: Ալիզադեն իր այս մտքերը հիմնավորել է, որ «1998-ին նախագահ Տեր-Պետրոսյանը ավելի իրատեսական մոտեցումներ ուներ Ղարաբաղի հաշվով, որը, սակայն, Մոսկվայի սրտով չէր»:

Մի կողմ թողնելով Ալիզադեի «հրամանատար-ՀՀ նախագահ» նույնականությունները, կենտրոնանանք քաղաքագետի ասածի մեկ այլ մասի վրա. փաստորեն Ռուսաստանը, ըստ Ալիզադեի, նույնպես կողմնակից է Ղարաբաղի ներկա կարգավիճակին, չէ՞ որ հակառակ պարագայում Երեւանը իր հայտնի դիրքորոշմամբ դեմ կգնար Մոսկվային, ինչը, Ալիզադեի խոսքերով, «անհնար է պատկերացնել»: Ադրբեջանցի քաղաքագետը նաեւ «մաֆիոզ եւ ուժային կառույցների վրա հիմնված՝ ահաբեկիչ ղեկավարություն է համարել ՀՀ ներկայիս իշխանություններին, անհնար է համարել ՀՀ-ում իշխանափոխությունը եւ այլն: Այդ ամենին անդրադառնալն իմաստ չունի, քանի որ Ադրբեջանի «անբասիր» ու «գույքառատ» իշխանությունների մասին խոսելու համար կարիք կունենանք դիմելու միջազգային մամուլին, որտեղ թեմայով հրապարակումներ բազմաթիվ են, պարզապես նշենք, որ Ալիզադեն արդյունավետ եւ իրատեսական չի համարել Մինսկի խմբի համանախագահների կազմի փոփոխումը՝ այնտեղ կոնկրետ Թուրքիային ընդգրկելով. «Դա անհնար է, քանի որ նոր համանախագահին հաստատելու համար անհրաժեշտ է հակամարտող բոլոր կողմերի համաձայնությունն անխտիր, իսկ Երեւանը երբեք չի համաձայնի Անկարային տեսնել համանախագահ», նշել է Ալիզադեն:

Հ. Ա.

# Բաշար ալ Ասադ. «Թուրք-սիրիական հարաբերությունները ձեռք են բերել ռազմավարական համագործակցության բնույթ»

Այս հայտարարությունը Սիրիայի նախագահ **Բաշար ալ Ասադն** արել է Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանի հետ հանդիպմանը, որը մեկօրյա այցով Սիրիայում էր անցած շաբաթ: Այցի ընթացքում քննարկվել են թուրք-սիրիական երկկողմ հարաբերությունները, տարածաշրջանային զարգացումները եւ ահաբեկչությանն առնչվող մի շարք հարցեր: Ինչպես Սիրիայի նախագահը, այնպես էլ Ռեջեփ Թայիփ Էրդողանը երկկողմ համագործակցության ճանապարհին կարեւոր քայլ են համարում թուրք-սիրիական ռազմավարական հանձնաժողովի հերթական նիստը, որ գումարվել էր այս ամսվա սկզբին Լաթաքիայում: Բացի այդ՝ Էրդողանը տեղեկացրել է ռազմավարական համագործակցության շրջանակներն ընդլայնելու մտադրության մասին, որին ուղղված հաջորդ քայլը տարածաշրջանի 4 երկրների՝ Սիրիայի, Թուրքիայի, Լիբանանի եւ Հորդանանի կառավարությունների ղեկավարների մակարդակով հանդիպումն է դեկտեմբեր ամսին: Այդ հանդիպմանը նախատեսված է քննարկել նշված երկրների մասնակցությամբ Ռազմավարական համագործակցության խորհրդի ստեղծման եւ ֆինանսավորման մանրամասները: Էրդողանի եւ Ասադի քննարկման առանցքային թեմաներից է եղել Իրաքի կառավարության ձեւավորման հարցը, քանի որ այդ երկրում խորհրդարանական ընտրություններից թեեւ շուրջ 6 ամիս անցել է, սակայն կառավարություն դեռ չի ձեւավորվել: Ինչպես իրավացիորեն նկատել է Բաշար Ասադը՝ Իրաքում ընթացող քաղաքական զարգացումները, բնական է, կարող են իրենց ազդեցությունն ունենալ հարեւան երկրների, մասնավորապես Սիրիայի եւ Թուրքիայի վրա՝ հաշվի առնելով այդ երկրներում քրդական հիմնախնդրի առկայությունը: Այս առումով կողմերը շեշտել են իրաքյան ազգային միասնական կառավարության կազմավորման անհրաժեշտությունը, որը պիտի խարսխվի ազգային համաձայնության եւ նպատակների, երկրի տարածքային ամբողջականության, այլ ոչ թե ռասայական կրոնական, սոցիալական խտրականության սկզբունքների հիման վրա: «Մեր կողմից այս թեմայի քննարկումը չի նշանակում, թե Սիրիան եւ Թուրքիան միջամտելու են Իրաքի գործերին: Որոշումներն ամեն դեպքում կայացնելու է Իրաքը», ընդգծել է Ասադը:

Համատեղ մամուլի ասուլիսի ընթացքում անդրադարձ է կատարվել նաեւ Մերձավոր Արեւելքի խաղաղության գործընթացին: Նախագահ Ասադը նշել է, որ սիրիա-իսրայելական բանակցությունների ապագայի առնչությամբ ներկայումս հստակ ոչինչ չի կարելի ասել, մթնոլորտը դեռեւս ոչ դրական է՝ չնայած որոշ նախաձեռնություններին եւ առաջարկներին: Բացի այդ՝ նա վերահաստատել է սիրիական կողմի՝ Իսրայելի կողմից Գոլանի գրավյալ տարածքները վերադարձնելու պահանջը:

Պատրաստեց
ԼԻԼԻԹ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԸ

# Աճեցվել է 821 կիլոգրամանոց դդում




Վիսկոնսինի նահանգի 32-ամյա բնակիչ Քրիս Սթիվենսի աճեցրած դդումը Գինեսի ռեկորդների գրքում գրանցվել է որպես աշխարհի ամենամեծ դդում: Այդ վիթխարի բանջարի քաշը 821,23 կիլոգրամ է, որ 38,56 կգ-ով գերազանցում է նախորդ ռեկորդը (Օհայոյի նահանգ): Նոր ռեկորդակրի շրջագիծը 4,74 մետր է:

USA Today թերթը հաղորդում է, որ ռեկորդակիր դդումն առաջին անգամ ցուցադրվել է Stilwater Harvest փառատոնում (Մինեսոտայի նահանգ), ապա տեղափոխվել է Նյու Յորք, որտեղ հոկտեմբերի 21-ին հանրությանն է ներկայացվել Բրոնքսում գտնվող բուսաբանական այգում:

# Նավթային պաշարներով Իրանն աշխարհում երրորդն է

**Իրանի գնահատմամբ՝ նավթային սեփական պաշարները հասնում են 150 միլիարդ բարելի: Այս ցուցանիշով Իրանն աշխարհում է զբաղեցնում է երրորդ տեղը՝ զիջելով միայն Սաուդյան Արաբիային եւ Վենեսուելային: Նկատենք, որ ավելի վաղ երրորդ տեղում ժամանակավորապես հայտնվեց Իրաքը՝ նավթի 143 միլիարդ բարել պաշարով: Իրանի նավթի նախարար Մասուդ Միրքազեմին հայտարարել է, որ Հորմուզան նահանգում նոր նավթահոր է բացվել, ինչն Իրանին թույլ կտա նավթարդյունահանումը հասցնել 4.2 միլիոն բարելի մեկ օրում, սակայն ՕՊԵԿ-ի (Organization of the Petroleum Exporting Countries՝ Նավթ արտահանող երկրների կազմակերպություն) սահմանած քվոտաների արդյունքում Իրանը չի կարող գնալ այդ քայլին: Չնայած կիրառվող միջազգային պատժամիջոցներին՝ նավթ արտահանող երկրների շարքում Իրանը ներկայումս զբաղեցնում է հինգերորդ տեղը:**

Լ. Մ.



# Ամերիկացի հաղորդավարը հեռացվել է «հակաիսլամական» խոսքերի համար

**Ամերիկյան National Public Radio (NPR) ռադիոկայանի ղեկավարությունը մահմեդականների վերաբերյալ անզգույշ արտահայտության պատճառով աշխատանքից ազատել է լրատվական եւ վերլուծական ծրագրերի հաղորդավարին: Այդ մասին հաղորդում է Fox News հեռուստաընկերությունը:**

**56-ամյա լրագրող Խուան Ուիլյամսը հեռացվել է այն բանից հետո, երբ Fox News-ի եթերում (որտեղ աշխատում էր NPR-ին զուգահեռ) պատմել էր, որ ինքը նյարդանանում է, եթե օդանավերում հայտնվում է ավանդական իսլամական հագուստներով մարդկանց կողքին:**

**Ռադիոկայանի ղեկավարությունը հայտարարել է, որ հաղորդավարը չպետք է հրապարակավ պատմի մահմեդականների հանդեպ իր զգացումների մասին: Ուիլյամսի հետ կնքված պայմանագիրը լուծարվել է հոկտեմբերի 20-ին: Հաջորդ օրը NPR-ը տարածել է ներքին հայտարարություն՝ նշելով, որ հաղորդավարին քանիցս զգուշացրել էին, որ նրա մեկնաբանությունները հաճախ տարբերվում են ընկերությունում ընդունված սկզբունքներից եւ դիպչում են ոմանց զգացմունքներին:**



**Ամերիկացի մի շարք լրագրողներ պաշտպանել են Ուիլյամսին՝ հայտարարելով, որ նրա հեռացումը փաստորեն NPR ռադիոկայանում գրաքննություն հաստատելու փորձ է:**

**Խուան Ուիլյամսը NPR-ում աշխատում էր 1999-ից: Սկզբում նա ցերեկային շոուի հաղորդավար էր, հետո դարձել էր առաջատար թղթակից եւ վերլուծաբան: Fox News-ում աշխատելուց բացի, Ուիլյամսը կանոնավորապես հրապարակումներով հանդես է եկել «Վաշինգտոն փոստ», «Նյու Յորք թայմս», «Ուոլ Սթրիթ ջորնըլ» եւ այլ թերթերում:**

# Խոլերայի համաճարակ Հաիթիում

**Հաիթիի Հանրապետության հյուսիսում խոլերայի համաճարակ է բռնկել, դրա հետեւանքով արդեն 135 մարդ է մահացել: Տեղի բժշկական միությունների տվյալները վկայակոչելով՝ Ֆրանսպրեսը հաղորդում է, որ վարակված անձանց թիվը հասնում է 1500-ի:**

**Պետության մայրաքաղաք Պորտ օ Պրենսում խոլերայով վարակվելու դեպքեր առայժմ չեն արձանագրվել: Մինչդեռ համաճարակի տարածման շրջաններում հիվանդանոցները լեփ-լեցուն են:**

**Բժշկական ծառայությունների գնահատումների համաձայն, տարափոխիկ հիվանդությունների տարածմանը նպաստում է այն հանգամանքը, որ հունվարյան երկրաշարժից հետո անօթեւան մնացած բազմաթիվ հաիթցիներ ապրում են ճամբարներում, հակաասանիտարական պայմաններում եւ գրեթե չեն օգտվում մաքուր ջրից:**

**2010-ի հունվարյան աղետալի երկրաշարժից զոհվեց 250 հազար մարդ, 1,2 մլն հաիթցի մնաց անօթեւան:**

# 82-ամյա Մուբարաքը ուզում է նորից նախագահ վերընտրվել



**1981 թվականից Եգիպտոսի նախագահի պաշտոնը զբաղեցնող Հոսնի Մուբարաքը մտադիր է մասնակցել 2011-ի հոկտեմբերին երկրում կայանալիք նախագահական ընտրություններին: Այդ մասին հաղորդում է Ֆրանսպրես գործակալությունը, վկայակոչելով կառավարող Ազգային-դեմոկրատական կուսակցության բարձրաստիճան անդամներից մեկին:**

**Վերջինիս խոսքերով, 82-ամյա Մուբարաքը ընտրություններում կդառնա կառավարող կուսակցության թեկնածուն: Ինքը՝ Մուբարաքը, առայժմ որեւէ հայտարարություն չի արել ընտրություններին իր մասնակցության վերաբերյալ:**

**Մինչդեռ վերջերս հաղորդումներ են հայտնվում Եգիպտոսի նախագահի առողջական վատ վիճակի վերաբերյալ: Մասնավորապես ամռանը ամերիկյան հատուկ ծառայությունները հայտարարեցին, որ Մուբարաքը հիվանդ է ստամոքսի եւ ենթաստամոքսային գեղձի քաղցկեղով, որը վերջնական փուլում է: Այս կապակցությամբ երկյուղ կա, որ նախագահը կարող է եւ չապրել մինչեւ առաջիկա ընտրությունները:**

**Ֆրանսպրեսը նշում է, որ Ազգային-դեմոկրատական կուսակցությունից նախագահության եւս մեկ թեկնածու է համարվում Հոսնի Մուբարաքի որդին՝ 46-ամյա Գամալ Մուբարաքը:**

# «Մեծ քսանյակի» ֆինանսների նախարարների հանդիպում

Հարավային Կորեայում հոկտեմբերի 22-ին սկսվել է «Մեծ քսանյակի» ֆինանսների նախարարների եւ կենտրոնական բանկերի ղեկավարների երկօրյա հանդիպումը: Քննարկվում են «Մեծ քսանյակի» առաջիկա գագաթաժողովի հարցեր, հաղորդում է BBC-ն:

Նախարարները փորձում են ընդհանուր մոտեցում մշակել արժույթի միջազգային շուկաների նկատմամբ: Սակայն բարդություններ է հարուցում Չինաստանը, որը հրաժարվում է բարձրացնել յուանի փոխարժեքը: Նոր զարգացող երկրները հետեւում են նրա օրինակին, որպեսզի խթանեն արտահանությունը:

Վերլուծաբանները գլխավոր խնդիրներից մեկը համարում են զարգացած երկրների ցածր տոկոսադրույքները, որոնք ներդնողներին ստիպում են միջոցներ ներդնել նոր զարգացող երկրներում՝ ակնկալելով առավել մեծ հասույթ:

# «Միկայի» թիմերը հաջողություն կնքեցին մրցակիցների հետ

## 6-րդ տուրում կկայանա «Միկա»-«Էկոնոմիստ» վճռորոշ մրցախաղը

Շախմատի Եվրոպայի թիմային առաջնության 5-րդ տուրում «Միկայի» երկու թիմերն էլ իրենց մրցախաղերն առաջին անգամ ավարտեցին ոչ-ոքի: Տղամարդկանց թիմն առաջին միավորը կորցրեց` չկարողանալով հաղթել չեխական «G-Team-ին»: Մեր շախմատիստները ձեռքից բաց թողեցին միանձնյա առաջատար դառնալու լավ հնարավորությունը: Մեր թիմից միակ հաղթանակը տոնեց Գաբրիել Սարգսյանը` պարտության մատնելով Մաթեուշ Բարտելին: Գաբրիելը մրցաշարում անդրանիկ հաղթանակը տոնեց: Նախորդ չորս պարտիաներում Սարգսյանը հաշտություն էր կնքել մրցակիցների հետ: Չեխերից միակ հաղթանակը տոնեց Ժիրի Ստոչեկը` առավելության հասնելով Արման Փաշիկյանի նկատմամբ, որը մրցաշարում անդրանիկ պարտությունը կրեց: Մյուս չորս պարտիաներում մրցակիցները հաշտություն կնքեցին: Առաջին կես միավորը կորցրեց Լեւոն Արոնյանը Վիկտոր Լազնիչկայի հետ պարտիայում: Մինչ այդ «Միկայի» առաջատարը 3 անընդմեջ հաղթանակ էր տոնել: Ոչ-ոքի ավարտվեցին նաեւ Հրաչեկ-Հակոբյան, Մարկոս-Մելքումյան, Հաբա-Անդրեասյան պարտիաները:

Կանանց «Միկա» թիմի մրցակիցն առաջատարներից մեկն էր` ռուսական AVS-ը: Առաջին խաղատախտակի վրա բուլղարուհի Անտոանետա Ստեֆանովան հաղթեց Էլինա Դանիելյանին, որը մրցաշարում 2-րդ պարտությունը կրեց: Մեր թիմից միակ հաղթանակը տոնեց 4-րդ խաղատախտակի վրա հանդես եկող Լիլիթ Գալոյանը` առավելության հասնելով Մարիա Մուզիչուկի նկատմամբ: Հարիկա Դրոնավալի-Կատերինա Լահնո, Լիլիթ Մկրտչյան-Նատալյա Պոգոնինա պարտիաներն ավարտվեցին ոչ-ոքի:

Տղամարդկանց մրցաշարում «Միկան» 5 տուրից հետո 9 միավորով 2-րդ տեղում է: Բոլոր պարտիաներում թիմը վաստակել է 21,5 միավոր: Աղյուսակը 10 միավորով (ընդհանուրը` 22) գլխավորում է անցյալ



տարվա չեմպիոն Սարատովի «Էկոնոմիստը», որն անչափ կարեւոր հաղթանակ տոնեց մրցաշարում ամենաբարձր վարկանիշն ունեցող ադրբեջանական ՍՈԿԱՐ-ի նկատմամբ` 4-2: «Էկոնոմիստի» կազմում հաղթանակներ տարան Պավել Էլյանովը, Դմիտրի Անդրեյկինը եւ Ալեքսանդր Մոիսեենկոն` պարտության մատնելով համապատասխանաբար Շահրիյար Մամեդյարովին, Ալեքսեյ Շիրովին եւ Մաքսիմ Վաշիե-Լագրավին: ՍՈԿԱՐ-ից միակ հաղթանակն իր օգտին գրանցեց Ալեքսանդր Գրիշչուկը` պարտության մատնելով Եվգենի Ալեքսեեւին: Տոմաշեւսկի-Ռաջաբով, Նի Հուա-Կասիմջանով պարտիաներն ավարտվեցին ոչ-ոքի:

ՍՈԿԱՐ-ը, Չեռնիգովի, Սանկտ Պետերբուրգի շախմատի ակումբի, Մոսկվայի շախմատի տան թիմերը, «Յուգրան» եւ «G-Team»-ը վաստակել են 8-ական միավոր: Սանկտ Պետերբուրգի թիմը 3,5-2,5 հաշվով հաղթեց բոսնիական «Բիհացին»: Թիմի հաղթանակն ապահովեց Վադիմ Զվյագինցեւը` պարտության մատնելով Մուհամեդ Բորիչին: Մյուս պարտիաները, այդ թվում Մովսիսյան-Սարիչ մրցախաղը, ավարտվեցին ոչ-ոքի:

6-րդ տուրում կկայանա մրցաշարի կենտրոնական հանդիպումը «Միկայի» եւ «Էկոնոմիստի» միջեւ, որի ելքը չափազանց մեծ նշանակություն ունի չեմպիոնի տիտղոսի համար մղվող պայքարում: Հիշեցնենք, որ անցյալ տարի Մակեդոնիայում կայացած Եվրոպայի ակումբային առաջնությունում «Միկան» միակ պարտությունը կրել էր հենց «Էկոնոմիստից»` 5-րդ տուրում զիջելով 2,5-3,5 հաշվով: Հենց այդ պարտությունն էլ վճռորոշ եղավ ոսկե մեդալների համար մղվող պայքարում: «Միկան» գրավեց 2-րդ տեղը` չեմպիոնի տիտղոսը զիջելով «Էկոնոմիստին», որը բոլոր 7 մրցախաղերում էլ հաղթել էր մրցակիցներին: Այնպես որ «Միկան» պետք է ձգտի ռեւանշի հասնել նախորդ տարվա պարտության դիմաց:

Կանանց մրցաշարում 8 միավորով առաջատարը Ռուսաստանի AVS-ն է: 7-ական միավորով հաջորդ տեղերում են Մոնտե Կառլոյի թիմը, «Միկան», Սանկտ Պետերբուրգի շախմատի ակումբի շախմատիստները եւ Թբիլիսիի «Սամայան»: Վերջինս անդրանիկ պարտությունը կրեց` 0,5-3,5 հաշվով զիջելով Սանկտ Պետերբուրգի շախմատի ակումբի թիմին: Մոնտե Կառլոյի թիմը 3-1 հաշվով հաղթեց BAS-ին: 6-րդ տուրում «Միկայի» մրցակիցը կլինի մրցաշարի ամենաբարձր վարկանիշ ունեցող Մոնտե Կառլոյի թիմը: AVS-ը կմրցի Սանկտ Պետերբուրգի շախմատի ակումբի թիմի հետ, իսկ «Սամայայի» շախմատիստուհիներն ուժերը կչափեն «Գիպտորետտրանսի» հետ:

# Պետերբուրգյան մղձավանջ «Հայդուկի» եւ նրա ֆանատների համար

Ֆուտբոլի Եվրոպայի լիգայի մրցաշարում հաջող մրցելույթներն են շարունակում Սանկտ Պետերբուրգի «Զենիթն» ու Մոսկվայի ԲԿՄԱ-ն, որոնք 3-րդ անընդմեջ հաղթանակները տոնեցին:

G խմբում «Զենիթը» սեփական հարկի տակ 2-0 հաշվով հաղթեց խորվաթական «Հայդուկին»: Խաղի նախօրեին, երեկոյան մոտ 50 հոգի դիմակավորված ներխուժել են «Դոստոեւսկի» հյուրանոց եւ դաժան ծեծի են ենթարկել նախասրահում գտնվող խորվաթ ֆանատներին: Միջադեպի արդյունքում խորվաթներից չորսին տեղափոխել են հիվանդանոց: Մինչ ոստիկանությունը տեղ կհասներ, դիմակավորված անձինք ավարտել էին իրենց արյունալի հաշվեհարդարն ու հեռացել դեպքի վայրից:

G խմբի մյուս խաղում «Անդերլեխտը» սեփական դաշտում 3-0 հաշվով հաղթեց ԱԵԿ-ին: F խմբում ԲԿՄԱ-ն հյուրընկալվելիս 3 անպատասխան գնդակ խփեց իտալական «Պալերմոյի» դարպասը: «Սպարտա»-«Լոզան» մրցախաղն ավարտվեց ոչ-ոքի` 3-3:



E խմբում 7 միավորով առաջատարը ԲԱՏԷ-ն է, որը հյուրընկալվելիս 1-0 հաշվով հաղթեց «Շերիֆին»: Կիեւի «Դինամոն» էլ արտագնա խաղում հաջողության հասավ հոլանդական «Ալկմարի» նկատմամբ (2-1)` տոնելով անդրանիկ հաղթանակը:

I խմբում Խարկովի «Մետալիստը» սեփական հարկի տակ 2-1 հաշվով հաղթեց իտալական «Սամպդորիային» եւ 6 միավորով 2-րդ տեղում է: Առաջատարը հոլանդական «Էյնդհովենն» է, որն ունի 7 միավոր շնորհիվ «Դեբրեցենի» նկատմամբ 2-1 հաշվով տարած հաղթանակի: Իսկ ահա ուկրաինական մյուս թիմի` «Կարպատների» համար 3-րդ տուրն անհաջող էր: Լվովում թիմը զիջեց իսպանական «Սեւիլիային» (0-1): Վերջինս 6 միավորով J խմբում 2-րդ տեղում է: Իսկ աղյուսակը 7 միավորով գլխավորում է ՊՍԺ-ն, որը Դորտմունդի «Բորուսիայի» հետ արտագնա հանդիպումն ավարտեց ոչ-ոքի` 1-1:

Ահա կայացած մյուս հանդիպումների արդյունքները. «Մանչեսթր Սիթի»-«Լեխ»` 3-1, «Զալցբուրգ»-«Յուվենտուս»` 1-1, «Աստոն Վիլլա»... 



# Մեդալ նվաճել չհաջողվեց

Մարոկկոյի Ագադիր քաղաքում մեկնարկած ձյուդոյի աշխարհի երիտասարդական առաջնությունում Հայաստանի պատվիրակներից առաջինը մրցասպարեզ դուրս եկավ 60 կգ քաշային Գոռ Հարությունյանը: Առաջին գոտեմարտում նա հաղթեց Ուկրաինան ներկայացնող Գեւորգ Խաչատրյանին, ապա պայքարից դուրս մղեց բելառուսցի Վահե Թութխալյանին եւ ադրբեջանցի Միրզա Ասքյարովին: Քառորդ եզրափակիչում Գոռի մրցակիցը ճապոնացի Տորու Շիշիմեն էր, որի դիմադրությունը հաղթահարել հայ ձյուդոյիստին չհաջողվեց: Ճապոնացին նվաճեց աշխարհի չեմպիոնի տիտղոսը, իսկ Գոռն իրավունք ստացավ պայքարելու բրոնզե մեդալի համար:

Ցավոք հայ ձյուդոյիստներին չհաջողվեց մրցանակակիր դառնալ: Առաջին գոտեմարտում Գոռը պարտության մատնեց իրանցի Ղասեմ Նուրիզադեին, իսկ բրոնզե մեդալի համար վճռորոշ հանդիպումում զիջեց ռուսաստանցի Յակուբ Շամիլովին: Արդյունքում Գոռ Հարությունյանը գրավեց 5-րդ տեղը:

# Հայ պատանիներից վեցն առաջատարների թվում են

Հունաստանում ընթացող շախմատի աշխարհի պատանեկան առաջնության 2-րդ տուրում Հայաստանի 19 շախմատիստներից 12-ը հաղթանակ տոնեցին: Առավել հաջող են հանդես գալիս Արթուր Հողմրցյանը, Մանուել Պետրոսյանը, Միքայել Մկրտչյանը, Տիգրան Հարությունյանը, Հովհաննես Գաբուզյանը, Սամվել Տեր-Սահակյանը, որոնք 2-րդ անընդմեջ հաղթանակները տոնելով, տարիքային իրենց խմբերում առաջատարների թվում են:

Մինչեւ 10 տարեկանների մրցաշարում Հողմրցյանը հաղթեց Արսեն Բաբաեւին: Մինչեւ 12 տարեկանների մրցաշարում Պետրոսյանն ու Մկրտչյանը պարտության մատնեցին համապատասխանաբար Պյոտր Կարպացին եւ Յուստուս Վիլիամսին: Մինչեւ 14 տարեկանների մրցաշարում Հարությունյանը իր 2-րդ հաղթանակը տոնեց Ռոման Գրիբի նկատմամբ: Մինչեւ 16 տարեկանների մրցաշարում Գաբուզյանն առավելության հասավ Հիբիկի Սակայի նկատմամբ, իսկ Տեր-Սահակյանը մինչեւ 18 տարեկանների մրցավեճում հաղթեց Պրիադիարշանին:

Հայ շախմատիստուհիներից լավագույն արդյունքն ունի մինչեւ 14 տարեկանների մրցաշարում հանդես եկող Սուսաննա Գաբոյանը: Նա վաստակել է 1,5 միավոր: 2-րդ տուրում Գաբոյանը ոչ-ոքի խաղաց ՖԻԴԵ-ի վարպետ Սարասադաթ Խադեմալշարիի հետ: Գաբոյանն ընթանում է 21-րդ տեղում:

# Մրցաշարի հաղթողը «Գլխամաս-Բիզնես» թիմն է

«Արդշինինվեստբանկի» ներբանկային մինի ֆուտբոլի 2010-ի առաջնության հաղթող է ճանաչվել «Գլխամաս-Բիզնես» թիմը: Մասնակից թիմերը մրցել են երկու ենթախմբերում` առաջին ենթախմբում ընդգրկվել են գլխամասային գրասենյակը ներկայացնող թիմերը, իսկ երկրորդում` մասնաճյուղերի թիմերը:

Մրցաշարի հաղթող ճանաչված «Գլխամաս-Բիզնես» թիմն արժանացավ «Արդշինինվեստբանկի» մինի ֆուտբոլի փոխանցիկ գավաթին, դրամական պարգեւի եւ պատվոգրի: Երկրորդ եւ երրորդ տեղերը զբաղեցրած Սեւան-Հրազդանի տարածաշրջանի եւ «Գլխամաս-Անվտանգություն» թիմերը նույնպես արժանացան դրամական խոշոր պարգեւների եւ պատվոգրերի:

Ինչպես նշել է «Արդշինինվեստբանկի» վարչության նախագահի պաշտոնակատար Գուրգեն Հարությունյանը. «Նման մրցաշարերը ոչ միայն կոփում են մեր աշխատակիցների առողջությունը եւ ֆիզիկական պատրաստվածությունը, այլ նաեւ նրանց մոտ ամրապնդում են համատեղ գործունեության եւ միասնական թիմային աշխատանքի հմտությունն ու պատրաստակամությունը: Այս մրցաշարն արդեն երկրորդն է եւ դարձել է «Արդշինինվեստբանկում» ձեւավորված լավագույն ավանդույթների շարունակություն»:

Ա. Մ.

# Ջորջ Բեսթի մրցանակները վաճառվեցին աճուրդում



«Մանչեսթր Յունայթեդի» եւ Հյուսիսային Իռլանդիայի հավաքականի անվանի հարձակվող Ջորջ Բեսթի նվաճած 13 մրցանակները նրա քրոջ` Բարբարա Մակնելիի նախաձեռնությամբ աճուրդի էին հանվել:

Լոնդոնում կայացած աճուրդում 156 հազար ֆունտ ստեռլինգով վաճառվել է 1968-ին «Մանչեսթր Յունայթեդի» կազմում չեմպիոնների գավաթի խաղարկությունում Բեսթի նվաճած ոսկե մեդալը: Սպասվում էր, որ այն կվաճառվի 90-120 հազար ֆունտ ստեռլինգով: Հիշեցնենք, որ «Մանչեսթր Յունայթեդն» անգլիական առաջին ակումբն էր, որին հաջողվեց 1968-ին նվաճել չեմպիոնների գավաթը:

Հետաքրքրական է, որ ոսկե մեդալի կրկնօրինակը վաճառվեց 9 հազար ֆունտ ստեռլինգով: Այն պատրաստվել էր, քանի որ Բեսթը կորցրել էր իսկական մեդալը: Ընդհանուր առմամբ աճուրդի վաճառքից 200 հազար ֆունտ ստեռլինգ գումար էր ստացվել:

Բելֆաստում ծնված Ջորջ Բեսթը 1963-1974-ին հանդես է եկել «Մանչեսթր Յունայթեդում»` թիմի կազմում անցկացրած 470 խաղում խփելով 179 գնդակ: 2005-ին 59 տարեկանում նա կնքեց իր մահկանացուն:

# Խաղաղ տուր

Չինաստանում շախմատի «Մեծ սաղավարտ» մրցաշարի 2-րդ տուրի 3 հանդիպումներն էլ խաղաղ ելք ունեցան: Հաշտություն կնքեցին Անանդն ու Կառլսենը, Վան Յուեն ու Հաշիմովը, Բաքրոն ու Թոփալովը: 2 տուրից հետո 1,5 միավորով առաջատարի դիրքը պահպանեց Կառլսենը: Թոփալովը, Անանդը, Վան Յուեն ու Հաշիմովը վաստակել են 1-ական, Բաքրոն` կես միավոր:

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

# Թուրքիայում բողոքականները ոչ թե սպառնալիք են, այլ՝ թիրախ

## *Նրանք իշխանություններից կյանքի անվտանգության երաշխիքներ են պահանջում*

Որքան էլ 99,9 տոկոսով մահմեդական լինի Թուրքիայի բնակչությունը, վերջին տարիներին քաղաքական որոշ շրջանակներ, օգտագործելով որեւէ եկեղեցու վերանորոգումը կամ տարեկան մեկ-երկու ժամով արարողության համար բացումը, սկսեցին խոսել երկրի քրիստոնեացման վտանգի մասին: Ընդ որում սա այն դեպքում, երբ կրոնական գործերի վարչության պետ, պրոֆ. Ալի Բարդաքօղլուն, ինչպես օգոստոսի 23-ին նշել էր «Վաթան» թերթը, հայտարարեց, որ մի քանի եկեղեցու բացումով Թուրքիան քրիստոնեական երկիր չի դառնա, եւ օրինակ բերեց եվրոպական երկրներին, ընդգծելով. «Ներկայումս մենք ավելի քան 3 հազար մզկիթ ունենք Եվրոպայում»: Բայց ապարդյուն: Երկրի քրիստոնեացման մտացածին վտանգի պատճառով Թուրքիայի ազգային շահերի համար հանկարծ լուրջ սպառնալիք դարձան նաեւ բողոքականները, որոնց անտանելի կացությունը «Բողոքականները սպառնալի՞ք են, թե՞ սպառնալիքի թիրախ» վերնագրով զեկուցագրում ամփոփել է Բողոքական եկեղեցիների միությունը:

Հոկտեմբերի 6-ին քրդական լրատվական գործակալությունը՝ firat-news.com, անդրադարձել էր զեկուցագրին, վկայակոչելով գործակալությանը՝ հոկտեմբերի 9-ի համարում անդրադարձավ նաեւ **«Ազգը»**: Այս զեկուցագիրը բողոքականների օրինակով լրացնում է Թուրքիայում ազգային փոքրամասնությունների էթնիկ եւ կրոնական խմբավորումների սահմանադրական իրավունքների ոտնահարման, նրանց հանդեպ իրականացվող հալածանքների մասին մեր պատկերացումները:

Բողոքական եկեղեցիների միության պատրաստած այս զեկուցագիրը հոկտեմբերի 5-ին Անկարայում հրավիրված ասուլիսով հանրությանն են ներկայացրել Թուրքիայում բողոքականների իրավական եւ սոցիալական խնդիրների միության նախագահ Զեքաի Թանյարը, գլխավոր քարտուղար Ումուդ Շահինը եւ «Մարդու իրավունքների օրակարգ» միության նախագահ, փաստաբան Օրհան Քեմալ Ջենգիզը:

Ասուլիսում Թանյարն ուշադրություն է հրավիրել սահմանադրական փոփոխությունների փաթեթում դավանանքի ազատություններն ընդարձակող հոդվածների վրա, ապա ասել է, որ հակառակ դրան, օրենքներով այդ նույն ազատությունները սահմանափակվում են, այսինքն՝ այն, ինչ տալիս են բացեիբաց, ձեռքի տակով հետ են վերցնում: Նա հիշեցրել է նաեւ երկրում բողոքականներին սեւացնելու նկրտումով ծավալվող քարոզչության մասին եւ ավելացրել է. «Հատկապես 2000-ից ի վեր, մամուլը բողոքականներին իբրեւ սպառնալիք է մատուցում հասարակությանը: Դա վտանգում է մեր ապրելու իրավունքը: Այդ քարոզարշավի հետեւանքով 2007-ին Մալաթիայում մորթեցին 3 բողոքականի: Դասագրքերով 8-րդ դասարանի աշակերտներին ներշնչում են, որ այս մարդիկ սպառնալիք են եւ թշնամի: Մեր ցանկությունը այս մտայնությունից թուրք հասարակության ձերբազատումն է»:

Վերջում Թանյարն ընդգծել է, որ օրենքը թեեւ բողոքականներին տալիս է ժողովարան (եկեղեցի) բացելու իրավունք, սակայն պրակտիկայում դա չի կիրառվում, եւ իրենք զրկվում են այդ իրավունքից, հետեւաբար, լինելով օրինական, զուտ դավանանքի պատճառով համարվում են օրենքից դուրս:

Փաստաբան Ջենգիզը Թուրքիայում բողոքականների դեմ ծավալվող սեւ քարոզչությունը պայմանավորել է «խորքային պետության» հարվածային ուժը հանդիսացող «Էրգենեքոն» կառույցի ձեռնարկումներով: Նա մասնավորապես նշել է. «Ահաբեկչական «Էրգենեքոնի» կորիզը, օգտագործելով լրջորեն զինված ուժերի գլխավոր շտաբին, մամուլին եւ մյուս լրատվամիջոցներին, թուրք ժողովրդի ենթագիտակցության մեջ ամրապնդեց «Թուրքիան օկուպացված է, կա երկիրը մասնատելու առաջադրանքով գործող միսիոներական հատուկ խումբ» ըմբռնումը: Թերթերն օգտագործվել են, գլխավոր շտաբում ճեպազրույցներ են կազմակերպվել բողոքականների դեմ, որպեսզի բողոքական քարոզիչների «վնասաբեր» գործունեության միջոցով ազգայնամոլ դարձնեն շարքային մահմեդականներին: Բողոքական քարոզիչները արդյունավետ միջոց եւ նպատակահարմար խորհրդանիշ են Անատոլիայի միամիտ մահմեդականներին հրահրելու, նրանց ազգայնամոլություն ներարկելու առումներով»:

Ինչ վերաբերում է զեկուցագրին, ապա դա կազմված է «Թուրքիայում բողոքականների առջեւ ծառացած խնդիրներ», «Դավանանքի համար հալածանքների թիրախ դարձած բողոքականների վկայություններ» եւ «Առկա խնդիրների կարգավորման առաջարկներ» բաժիններից:

Զեկուցագրի առաջին բաժնում մատնանշվում է.

«Ժողովարանների 99 տոկոսը չունեն իրավական անձի կարգավիճակ,

հակառակ կառուցապատման օրենքում կատարված փոփոխությունների, վողոքականներին աղոթարան կառուցելու հողատարածք չի հատկացվում: Անպատասխան են մնում քաղաքապետարան ներկայացված բոլոր դիմումները: Ստամբուլի ժողովարանը ներկայումս Թուրքիայում բողոքականների իրավական անձի կարգավիճակ ունեցող միակ եկեղեցին է,

երկրում չեն պաշտպանվում բողոքականների քաղաքացիական իրավունքները, չեն կանխարգելվում ատելության հրապարակային դրսեւորումները: Դատարանները հրաժարվում են ընթացք տալ այդ դրսեւորումների դեմ հարուցված հայցերին,

ինքնին մի մեծ խնդիր են դարձել տարրական եւ միջնակարգ դպրոցներում որպես պարտադիր առարկա դասավանդվող կրոնի դասերը: Որքան էլ քրիստոնյա երեխաներն ազատվեն այդ դասերից, դրա համար դպրոցում խտրականության են ենթարկվում եւ արժանանում են «գյավուր» կոչմանը,

որոշ դպրոցներում թուրք ուսուցիչները դասարանցիների առջեւ քրիստոնյա աշակերտին մահմեդականություն ընդունելու կոչ են անում,

բողոքականների 60 տոկոսը գործազուրկ մնալու եւ կյանքից զրկվելու մտավախությամբ ստիպված անձնագրում նշում է, որ մահմեդական է,

երկրում իրավական անձի կարգավիճակից զուրկ են նաեւ բողոքականների գերեզմանները»:

Քանի որ զեկուցագրի երկրորդ բաժինը տուժածների անձնական վկայություններով առաջին բաժնի հիմնավորումն է, ուստի անցնում ենք «առկա խնդիրների կարգավորման» բաժնին, որտեղ բողոքականները թուրքական պետությունից պահանջում են.

«Թուրքիայում միջազգային ստանդարտների մակարդակի բարձրացնել մտքի, կրոնի եւ դավանանքի ազատությունը,

ապահովել երկրում տարբեր դավանանքի տեր քաղաքացիների հավասարությունը, վերացնելով այն խտրականությունը, որն առաջացել է սուննի մահմեդականներին մատուցվող հոգեւոր ծառայությունների պատճառով,

կանխարգելել քաղաքական գործիչների բողոքականներին ուղղված սեւ քարոզչությունը, որպեսզի բողոքականները որպես ազգային անվտանգության սպառնալիք չընկալվեն երկրում,

վերացնել անձնագրում դավանանքի մասին նշումների վանդակը,

վերացնել աղոթարան ձեռք բերելու առջեւ ծառացած խոչընդոտները,

դասագրքերից հանել վիրավորական, նսեմացուցիչ եւ թշնամանք հրահրող այն բոլոր արտահայտությունները, որոնք օգտագործվում են հասարակության որոշակի հատվածի համար՝ դարձնելով հարձակումների թիրախ էթնիկ եւ կրոնական փոքրամասնությունները»:

Ի՞նչ արձագանք կստանան Բողոքական եկեղեցիների միության զեկուցագրում շարադրված պահանջները Թուրքիայում՝ չգիտենք: Բայց որ բողոքականների առջեւ ծառացած խնդիրները յուրահատուկ են նաեւ ազգային հայ, հույն, հրեա փոքրամասնություններին, ասորիներին, ալավիներին, եզդիներին, քրդերին, զազաներին, այսինքն՝ բացառությամբ սուննիների, էթնիկ եւ կրոնական բոլոր խմբավորումներին, ակնհայտ է: Եթե Թուրքիան չի հարգում ազգային փոքրամասնությունների հանդեպ Լոզանի պայմանագրով ստանձնած միջազգային պարտավորությունները, ինչպե՞ս պետք է հարգի էթնիկ եւ կրոնական խմբավորումների իրավունքները, երբ վերջիններս ամրագրված որեւէ կարգավիճակ էլ չունեն: Եթե Թուրքիայում իրավազուրկ են երկրի բնակչության 1/4-ը կազմող քրդերն ու 20 միլիոնի հասնող ալավիները, ի՞նչ կարող են ակնկալել 4000-ից մինչեւ 6000 գլխավորապես Ստամբուլում, Անկարայում եւ Իզմիրում կենտրոնացված բողոքականները, որքան էլ 200 տարվա ներկայություն ունենան երկրում:

Ի դեպ, այս բողոքականներից շուրջ 500-ը, ըստ Բողոքական եկեղեցիների միության, հայ են: Ըստ երեւույթին հենց այդ հանգամանքն էլ նպաստել է, որ 4-6 հազար բողոքականներ պետականորեն որպես սպառնալիք դիտարկվեն 75 միլիոնանոց Թուրքիային, եւ պետությունը թուրք հասարակության ենթագիտակցության մեջ ամրապնդի բողոքականներից բխող երկրի քրիստոնեացման եւ դրա միջոցով մասնատման այսպես կոչված վտանգը:

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ


### Հայտարարություն

Սույն թվականի հոկտեմբերի 29-ին, ժամը 14:00-ին ՀՀ Սյունիքի մարզի Լեռնաձորի գյուղապետարանում տեղի կունենա **«Կապան- Էներժի» ՓԲԸ-ի** կողմից ներկայացված Կապան-Քաջարան մայրուղու՝ 12-րդ կմ-ի վրա նախատեսվող «Ողջի-1» ՓՀԷԿ-ի կառուցման՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ հասարակական լսումներ: Տեղեկությունների համար դիմել ք.Երեւան Կոմիտաս 29 հասցեում: Հեռ. 22 02 18, 22-14-85:

### Հայտարարություն

Սույն թվականի հոկտեմբերի 29-ին, ժամը 12:00-ին տեղի կունենա ՀՀ Արարատի մարզի Արտաշատ քաղաքի **«Արտաշատի Բժշկական Կենտրոն»** ՓԲԸ-ում նախատեսվող կաթսայատան կառուցման նախագծերի վերաբերյալ հասարակական լսումներ: Նախագծային փաստաթղթերին կարելի է ծանոթանալ ք.Երևան Կոմիտաս 29 հասցեում: Հեռ. 22-14-85:

### Հայտարարություն

Սույն թվականի հոկտեմբերի 26-ին, ժամը 10:00-ին ՀՀ Արագածոտնի մարզում «Երեւան-Աշտարակ» ճնշուղու թիվ 21 հասցեում տեղի կունենա **«Ար-Մալի» ՍՊԸ-ին** պատկանող ԱԳԼՃԿ-ի կառուցման նախագծերի շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ հասարակական լսումներ: Նախագծային փաստաթղթերին կարելի է ծանոթանալ ք.Երեւան Կոմիտաս 29 հասցեում: Հեռ. 22-14-85:



ԾԱՆՈՒՑՈՒՄ

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

*ՀՀ կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեն հայտարարում է բաց մրցույթ՝ «Միջուկային եւ ռադիացիոն անվտանգության գիտատեխնիկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար*

Մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

- համապատասխան բնագավառի բարձրագույն կրթություն.
- ձեռնարկատիրական կամ կառավարման ոլորտի առնվազն երեք տարվա կամ առնվազն հինգ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ.
- իր պարտականությունների կատարման համար անհրաժեշտ իրավական ակտերի իմացություն (այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, համապատասխան ոլորտի Հայաստանի Հանրապետության օրենսդրություն եւ այլ իրավական ակտեր).
- կազմակերպության զարգացման եւ բարեփոխման հայեցակարգ, հիմնադրույթներ մշակելու կարողություն:

Մրցույթը կկայանա 22.12.2010 թ.՝ ժամը 10:00-ին, Կոմիտեի շենքում (ք. Երեւան, Տիգրան Մեծի 4):

Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետեւյալ փաստաթղթերը՝

- դիմում.
- 1 լուսանկար 3X4 չափի.
- քաղվածք՝ աշխատանքային գրքույկից.
- ինքնակենսագրություն.
- անձնագրի, բարձրագույն կրթության դիպլոմի (արական սեռի անձինք՝ նաեւ զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի) պատճենները.
- կադրերի հաշվառման անձնական թերթիկ (լրացված),
- տեղեկանք մշտական բնակության վայրից.

հրատարակված հոդվածների ցանկ, կամ գիտական կոչումը հավաստող փաստաթուղթ (դրանց առկայության դեպքում).

բնութագիր՝ վերջին աշխատավայրից (եթե կազմակերպությունը չի լուծարվել).

Քաղաքացիները փաստաթղթերը (բնօրինակներով) ներկայացնում են անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող այլ փաստաթղթով:

Դիմումները ընդունվում են աշխատանքային օրերին ժամը 9:30-ից մինչեւ 12:30-ը՝ ՀՀ կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժնում /հասցե՝ ք. Երեւան Տիգրան Մեծի 4, 5-րդ հարկ, հեռ. 56-40-14/:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 2010թ, դեկտեմբերի 1-ը ժամը 12:30-ը:

Մրցույթին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող են դիմել Կոմիտեի աշխատակազմ (ք. Երեւան, Տիգրան Մեծի 4, 5-րդ հարկ, անձնակազմի կառավարման բաժին, հեռ. 56-40 -14):



www.accea.info

ՆՈՐԱՐԱՐ ՓՈՐՁԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԿԵՆՏՐՈՆԸ

*Ներկայացնում է*

սեպտեմբեր 2 - հոկտեմբեր 30, 2010

**ԲԱԶՄԱՇԵՐՏ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ ԵՒ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑ**

Խմբական ցուցահանդես համադրությամբ ՍՈՆԻԱ ՊԱԼԱՍԱՆՅԱՆԻ

նոյեմբեր 8 - 15, 2010, ժամը 18:00-ից 20:00

**ՄԵԿ ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ**

**թատերական V փառատոն**

ՄՐՑՈՒՅԹՈՒՄ՝ 13 բեմադրություններ. Շ. Սիլվեսթեյնի, Ա. Չեխովի, Ա. Իսահակյանի, Է.Շմիթի, Լ. Տոլստոյի, Ս. դե Բովուարի, Վ. Սարոյանի գործերի հիման վրա:

ՄՐՑՈՒՅԹԻՑ ԴՈՒՐՍ՝ հրավիրված ֆրանսիացի եւ լեհ հեղինակների երկու փորձառական թատերախաղեր:

նոյեմբեր 16, 2010 - մարտ 12, 2011

**ՊԱՐԱՊ ՎԱԽՏԻ ԽԱՂԱԼԻՔ**

ԱՐՎԵՍՏԱԳԵՏՆԵՐԻ ԱՆԴՐԱԴԱՐՁԸ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Համադրող ՍԵԴԱ ՇԵԿՈՅԱՆ

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄՈՒՏՔՆ ԱԶԱՏ Է

Այցելություն ամեն օր բացի կիրակի եւ երկուշաբթի, ժամը 11:00-17:00

**Փավստոս Բյուզանդի 1/3 (Վերնիսաժի հարավ) հեռ. 568225**



### ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ բնապահպանության նախարարության կողմից ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ կառավարության 07.03.03 թ. N 217-Ն եւ N 218-Ն որոշումների պահանջների համաձայն մշակվում է Երեւան քաղաքում գործող **«Բիթլիս-Մեն» ՍՊԸ-ի** կողմից՝ ՀՀ Արարատի մարզի Քաղցրաշեն համայնքի վարչական տարածքում Արտաշատի ջրանցքի արագահոսի վրա՝ ոռոգման սեզոնին «Այգեզարդ» ՓՀԷԿ-ի շահագործման ջրօգտագործման թույլտվության գործունեության ժամկետի երկարաձգման նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին, ժամը 17-18-ը դիմել ՀՀ բնապահպանության նախարարություն (հասցեն՝ կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ):

Հասարակայնության կողմից փաստաթղթի նախնական տարբերակի լսումը տեղի կունենա 2010 թ. հոկտեմբերի 28-ին, ժամը 16.00-ին Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հակ, 541 սենյակ:

*ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ*

### ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ բնապահպանության նախարարության կողմից ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ կառավարության 07.03.03 թ. N 217-Ն եւ N 218-Ն որոշումների պահանջների համաձայն մշակվում է ՀՀ Լոռու մարզի Դսեղի համայնքում հողի սեփականատեր **Սուսաննա Համբարյանի** խմելու-կենցաղային նպատակով, Դսեղի համայնքի վարչական տարածքում գտնվող «Սամանդի Ճալա» կոչվող տարածքի բնական աղբյուրից 0,052 լ/վրկ ջրառի ջրօգտագործման թույլտվության նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին, ժամը 17-18-ը դիմել ՀՀ բնապահպանության նախարարություն (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ):

Հասարակայնության կողմից փաստաթղթի նախնական տարբերակի լսումը տեղի կունենա 2010 թ. հոկտեմբերի 28-ին, ժամը 16.00-ին Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

*ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ*

www.azg.am


ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համար՝ 02 Ա N 047261, տրված՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 22.10.2010, գինը՝ 100 դրամ, տպագրուած է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: